

ՆԻԻ ՏԵԼՀԻ, 24 (ԱՖՓ).- Իրանի նախագահ Մոհամեդ խարեզմի Ուրբաթ օր Հնդկաստան ժամանեց չորսօրեայ պաշտօնական այցելության մը համար: Խարեզմի կ'ընկերակցի բարձրաստիճանի պատուիրակը: Իրանի նախարար Սամադ Չանկաբադի, պաշտպանության նախարար Ալի Շամխանի եւ այլ պաշտօնատարներ: Խարեզմի տեսակցություններ պիտի ունենայ Հնդկաստանի նախագահ Ատուլ Բհալալի եւ վարչապետ Աթալ Գեհարի վաճառակի հետ: Իրանի նախագահի հանդիպումներ պիտի ունենայ նաեւ հնդիկ գործարարներու հետ:

### ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ ԿԱՐԻՔԸ ՏԱԿԱՒԻՆ ԶԻ ԶԳԱՑՈՒՐ

ԿԸՄԵ ԶՕՐ. ԼԱՏՈՒՏ

Նախագահ զօր. Էմիլ Լահուտ երէկ Պաշտպանի մէջ ընդունեց խմբագիրներու սենտիքայի նախագահ Մըլիսէմ Քարամը, որուն հետ քննարկեց տեղական եւ շրջանային իրադարձութիւնները, ինչպէս նաեւ լրատուական հարցեր:

Նախագահ Լահուտ շեշտեց, որ շրջանային վեճերու միջամտելու շրջանային ներկայ պայմաններուն նպատակով միակ քայլն է, որ կրնայ առնուիլ Լիբանանի կողմէ, չխախտելու համար Լիբանանի արձանագրած ազդային նուաճումները:

Նախագահ Լահուտ շեշտեց լիբանանցիներուն միասնակամուցութիւնը եւ համայնքայնութիւնէն հետո՝ ազգային դրական մթնոլորտի մը կարեւորութիւնը՝ ըսելով, որ անցեալի տխուր ու խոցելի օրինակները տակաւին թարմ կը մնան լիբանանցիներուն յիշողութեան մէջ:

Հանդիպումէն ետք Քարամ ըսաւ, որ նախագահ Լահուտ առաջնահերթութիւնը կը համարէ շրջանային զարգացումները եւ կը շեշտէ, որ կա-



Զօր. Լահուտ կ'ընդունի Մըլիսէմ Քարամը

ռավարութեան կազմի փոփոխութեան ժամանակը տակաւին չէ հասած՝ նշելով սակայն, որ այս կառավարութիւնը յաւիտեան կ'ապրի:

Քարամ յայտնեց, որ նախագահ Լահուտ կողմէ յայտարարուած թիւերուն եւ վարչութիւններուն՝ շարունակելու իրենց աշխատանքը եւ շրջանային լիբանանցիներուն հետեւողութիւնները դիմաց:

Նախագահ Լահուտ նկատել կու տայ Իրաքի հարցին հանդէպ Լիբանանի որդեգրած կեցուածքը, որ կը պարտադրէ սպաւինիլ ՄԱԿի Ապահո-

վութեան խորհուրդի միջոցով որոշումներ ընելու, սկսած է շրջանային եւ միջազգային շրջանակներուն մէջ դրական արձագանգներ գտնել:

Նախագահ Լահուտ կ'ընդգծէ, որ Պոստի ժողովը պէտք է գործնական ծրագրով մը ապահովելու ճիշդը: Ան կը շեշտէ, որ խաղաղ լուծում պահանջող երկիրներուն կոչերը չեն կրնար «գոռոմ-գոչում»ներ նկատուիլ այլ պէտք է պատասխաններ ստանան Միացեալ Նահանգներէն, Չինաստա-

Շար.՝ էջ 10

### ՍԹՐԱԶՊՈՒԿԻ ՄԷՋ ԲՆՆԱՐԿՈՒԹՅԱՒ ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՏԱԳՆԱՊԸ

«Մետիամար» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ Եւրոպական խորհուրդի նախարարներու Կոմիտէին ներկայացուցիչները երէկ Սթրասբուրգի մէջ քննարկած են Լեոնային Ղարաբաղի տագնապին լուծման ընթացքը, Հայաստանի եւ Արարկային նախագահներու ներկայացուցիչներուն եւ ՄԱԿի Միսսքի խմբակի համանախագահներուն հետ:

Եւրոպական խորհուրդի մամլոյ ծառայութիւնը քննարկման մանրամասնութիւնները չհաղորդեց եւ բաւականացաւ ըսելով, որ քննարկումները տեղի ունեցան եւ Եւրոպական խորհուրդին հանդէպ Հայաստանի եւ Արարկային ստանձնած պարտաւորութիւններու կատարման ծիրէն ներս:

Միւս կողմէ, Եւրոպական խորհուրդի նախարարներու Կոմիտէի ներկայացուցիչներ իրենց նիստին ընթացքին վաւերացուած են փաստաթուղթ մը, որ կ'առնչուի Թուրքիոյ կողմէ Հայաստանի շրջափակման, եւ որ պատասխան մըն է հայկական կողմին մէկ տարի առաջ ներկայացուցած գրաւոր հարցին:

Հայաստանի արտաքին գործոց նախարարութիւնը հաղորդագրութեամբ մը տեղեկացուց, որ Եւրոպացի պատուիրակները չկրնան հարցին նկատմամբ ընդհանուր դիրքորոշման մը հասնիլ: Այսուհանդերձ անոնք կոչ ուղղած են կողմերուն՝ ձգտելու շրջանին մէջ իրավիճակի այնպիսի պարզացման մը, որուն հիման վրայ բոլոր երկիրներուն միջեւ բարի դրացիական յարաբերութիւններ հաստատուին:

Եւրոպական խորհուրդին մէջ Հայաստանի մնայուն ներկայացուցիչ Քրիստիան Տէր Ստեփանեան յայտնած է, թէ նիստին Թուրքիոյ կողմէ Հայաստանի շրջափակման մասին նշումը յառաջացուցած է թրջական պատուիրակու-

Շար.՝ էջ 9

### ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ ԵՒ Յ. Յ. Դ. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒՆ ՄԻՋԵՒ



Ա. Ռուստամեան կը դիմաւորէ ամերիկացի դեսպանը

Հ. Յ. Դ. «Սիւնն Վրացեան» կեդրոնին մէջ երէկ կայացաւ հանդիպում մը Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Ջոն Օրտուէյի եւ Հ. Յ. Դ. Բիւրոյի անդամ Վահան Յովհաննիսեանի, Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ Արմէն Ռուստամեանի, Գերագոյն Մարմինի անդամ Գեղամ Մանուկեանի, Հ. Յ. Դ. Բիւրոյի քաղաքական եւ Հայ Դատի գրասենեակի տնօրէն Կիրո Մանոյեանի միջեւ:

Հանդիպումը նուիրուած էր Հայաստանի նախագահական յառաջիկայ ընտրութիւններուն, անոնց արդար կայացման եւ ազատութեան հարցերուն:

Զրոյցին ընթացքին քննարկեցաւ ներկայ նախընտրական իրավիճակը՝ ընտրութիւնները արդար եւ թափանցիկ ձեւով կայացնելու ուղղութեամբ տարուող աշխատանքները:

Շար.՝ էջ 2

### ԻՏԱԼԻՈՅ ՆՈՐ ԳԵՍՊԱՆԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ

### ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎՏԱՆԳԱԻՈՐ ՆԿԱՏԵՑ Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ԹՈՒՐՔԻՈՅ ԱՆԴԱՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա. կաթողիկոս երէկ ընդունեց Լիբանանի մէջ Իտալիոյ նոր նշանակուած դեսպան Ֆրանչո Միսթրիթթան: Փոխադարձ ծանօթացման հանդիպումին դեսպան Միսթրիթթայի համար հետաքրքրական էր իմանալ վեհափառ հայրապետին տեսակէտը՝ Եւրոպական Միութենէն ներս Թուրքիոյ մուտքին մասին: Իր տուած բացատրութեանց եւ լուսաբանական տեղեկութեանց մէջ վեհափառ հայրապետը ըսաւ. «Թուրքիոյ ներկայութիւնը կրնայ մեծապէս վնասել Եւրոպայի ինքնութեան եւ արժէքներուն, նկատի ունենալով ո'չ միայն Թուրքիոյ անցեալը, այլ նաեւ ներկայի վերաբերումը յատկապէս մարդկային իրաւանց բնագաւառէն ներս»:

Դեսպան Միսթրիթթա հետաքրքրութիւն ցոյց տուաւ նաեւ Միսթրիթթայի կաթողիկոսի ու յատկապէս Միջին Արեւելքի մէջ ապրող հայ ժողովուրդի պայմաններուն մասին: Վեհափառ հայրապետը համապարփակ կերպով ներկայացուց համապիտոյնեան հայ կեանքին պատկերը ու Մեծի Տանն Կիլիկիոյ դերակատարութիւնը:

### ՊԱՂԵՍՏԻՆՑԻՆԵՐՈՒՆ ԴԵՄ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՎԱՅՐԱԳՈՒԹԵԱՆ ԱԼԻՔԸ ԿԸ ԲԱՐՁՐԱՆԱՅ

Իսրայէլեան ընտրութիւններուն նախօրեակին վայրագութեան այլըր որեւէ մեղմացում չէ արձանագրած պաղեստինեան շրջաններուն մէջ, ուր կը բարձրանայ զոհերուն ու վիրաւորներուն թիւը:

Իսրայէլեան ուժերը երկու պաղեստինցիներ սպաննեցին Այրաբորդանանի մէջ: Իսկ Կազալի մէջ, սպաննեցին կին մը սրտի տաղանակի մը պատճառով մահացաւ, երբ իսրայէլեան ուժերը ուժեղացան Կազալ:

Բանակին աղբիւրները հաղորդեցին, որ Նապուսի մօտ, չորս պաղեստինցիներ կրակ ըացին իսրայէլացի զինուորներու վրայ, որոնք հակադարձեցին՝ երկու պաղեստինցի սպաննելով եւ երրորդ մըն ալ վիրաւորելով: Զորքերը յաջողած է փախուստ տալ: Գործողութեան պատասխանատուութիւնը չստանձնողեցաւ որեւէ շարժումի կողմէ:

Պաղեստինեան աղբիւրները յայտնեցին, որ 30 տարեկան Ֆաթմա Մաշհարաուի կը գտնուէր Կազալի մէջ հիւանդանոցին մէջ, եւ թէ կան սրտի տաղանակի մը պատճառով մահացաւ, երբ իսրայէլեան ուղղաթիւներուն արձակած հրթիռները ինկան հիւանդա-

### ՊԱՂՏԱՏ ԵՒ ԻՐԱՔՑԻՆԵՐԸ ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ԵՏ ՄՂԵԼՈՒ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՈՐԵՒԷ ՅԱՐՁԱԿՈՒՄ

Այն պահուն, երբ Իրաքի դրացի երկիրները կոչ կ'ուղղէին անոր յաւելեալ գործակցութիւն ունենալու ՄԱԿի քննիչներուն հետ, նախագահ Սատտամ Հիւսէյն կը յայտարարէր, որ իր ժողովուրդը չի վախնար պատերազմի ամերիկեան սպառնալիքէն:

Սատտամ, որ կը խօսէր կառավարութեան նիստին, ըսաւ, որ Իրաքի թշնամիները դիտել, թէ իրաքն ու անոր ժողովուրդը չեն վախնար ճնշումներէն եւ սպառնալիքէն: Ան աւելցուց, որ իրաքցիները պիտի չհրաժարին իրենց սկզբունքներէն՝ ամերիկեան սպառնալիքին դիմաց տեղի տալով: Սատտամ կ'ակնարկէր յատկապէս Մոսկոյ շրջանին մէջ ամերիկեան մեծաթիւ ուժերու կեդրոնացումին:

Փոխ վարչապետ Թաբթ Ազիզ իր կարգին ըսաւ, որ Միացեալ Նահանգներ կը փորձեն աշխարհին պարտադրել «պատերազմի տրամաբանութիւնը»: Ազիզ աւելցուց, որ Պաղեստին պատրաստ է ետ մղելու ամերիկեան որեւէ յարձակում: Ան յայտնեց նաեւ, որ ամերիկեան պատրաստութիւնները կը շարունակուին՝ անտեսելով թշնամիները դիտել, թէ մոտիկները պատերազմի մը:

Բ ր ի տ ա ն կ ա ն «Կարտիըն» օրաթերթին մէջ լոյս տեսած տեղեկագիրի մը համաձայն, Միացեալ Նահանգներու նախագահ Ջորձ Պուշ պատրաստուած է իրաքի դէմ պատերազմ յայտարարելու յառաջիկայ քանի մը օրէն, նոյնիսկ եթէ չկարենայ ապահովել ՄԱԿի զօ-

րակցութիւնն ու հաւանութիւնը: Ըստ օրաթերթին, որ կը մէջբերէր եւրոպացի բարձրաստիճանի պաշտօնատար մը, Ուաշինգթոն կը խօսի շարժման մասին: Պաշտօնատարը ըսած է նաեւ, թէ Պուշ թափ պիտի տայ պատերազմի ստանդարտներու ճիշդ շարժման մասին: Անկէ մէկ օր առաջ ՄԱԿի գլխաւոր քննիչները՝ Հանս Պիլքս եւ Մոհամեդ Պարստի Ապահովութեան խորհուրդին ներկայացուցած պիտի ըլլան իրաքի մէջ ցարդ կատարուած քննութիւններուն արժեւորումը:

Բրիտանական այլ տեղեկագիրի մը համաձայն, իրաքեան ուժերուն ընտրանին ստացած է քիմիական պատերազմի յատուկ տարագներ: «Պի. Պի. Սի»-ի կողմէ հրապարակուած տեղեկագիրի մը համաձայն, տարագներուն ցրուումը ենթադրել կու տայ, թէ իրաք կը պատրաստուի քիմիական զէնքեր օգտագործելու արեւմտեան ուժերուն դէմ՝ պատերազմի մը պարագային: Ըստ «Պի. Պի. Սի»-ի այս զօրով փաստաթուղթեր հասած են իրաքէն:

### Վ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԲԱՆԱՏԱՅԻ ՄԷՋ ԱՐՁԱՐԾԵՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՅԸ

Հ. Յ. Դ. Բիւրոյի անդամ, Հայաստանի Ազգային ժողովի պաշտպանութեան եւ ազգային անվտանգութեան յանձնաժողովի նախագահ Վահան Յովհաննիսեան 22 Յունուարին Քանաթայի Հայաստանի դեսպանատան մէջ հանդիպում մը ունեցած է Քանաթայի խորհրդարանի անդամ եւ խորհրդարանի ներքին մէջ Հայաստանի դեսպան Արա Պապեան, Քանաթայի Հայ Դատի յանձնախումբի ատենապետ Ժիրայր Պատմաճեան եւ յանձնախումբի անդամ Պօղոս Տուգչեան:

Աւելի քան 2 ժամ տեւած հանդիպումին արծարծուած է Հայկական Յեղափոխութեան ճանաչման հարցը: Տերեք Լի յայտնած է, թէ ինք պիտի շարունակէ ճանաչել Հայ Դատի առնչուող ինքնիշխան արդար լուծման: Կողմերը մանրամասնօրէն քննարկած են Լեոնային Ղարաբաղի տագնապը: Քանաթայի խորհրդարանական անձեռնմխելութեան հարցը միշտ յառաջացուցած է որոշ հարցեր: «Սահմաններու որեւէ խախտում կը յառաջանէ միջազգային բազմաթիւ նմանօրինակ հարցեր», նշած է Լի: Վահան Յովհաննիսեան եւ Արա Պապեան որոշ լուսաբանութիւններ տուած են Լեոնային Ղարաբաղի տագնապին մասին: Արձարձուած են նաեւ Հայաստանի շրջափակման հարցը, ինչպէս նաեւ Թուրքիոյ, Իրանի, Վրաստանի եւ Ազգայնականի հետ յարաբերութիւնները:

Նոյն օրը Վահան Յովհաննիսեան հանդիպում ունեցած է նաեւ կեդրոնական, արեւելեան եւ Հարաւային Եւրոպայի արտաքին գործոց նախարարութեան տնօրէն Մեք Քէյ հետ: Քանաթայի պաշտօնատարը գոհունակութիւն յայտնած է իր Հայաստան կատարած վերջին այցելութեան համար: Կողմերը քննարկած են Հայաստանի նախագահական յառաջիկայ ընտրութիւններուն եւ Հայաստանի մէջ ժողովրդավարութեան ամրապնդման կապուած հարցերը:

### ԿԻՊՐՈՍԻ ՏԱԳՆԱՊԻՆ ԱՌՆՁԱԿԻՑ ԵՐԿՈՒ ԿՈՂՄԵՐՆ ԱԼ ՊԵՏՔ Է ԶԻՋՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵՆ

ԿԸՄԵ ԱԿԱՍՐՈ ՏԵ ՍՈՓՈ

Յոյն եւ թուրք կիպրացիները կրնան մինչեւ Փետրուարի վերջ համաձայնութիւն մը ապահովել՝ իրենց կողմին վերամիացման վերաբերեալ, սակայն միայն եթէ երկու կողմերը գիծում կատարեն, գոյուցուող:

(ԱՖՓ)

Շար.՝ էջ 10

Շար.՝ էջ 2

### ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԵԾԵԼԱՐՇԱԻՆՈՐ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԸ

Երիտասարդության եւ մարմնակրթության նախարար Մեդուհ Յովնանեան երկն ընդունեց Լիբանանի Հեծելարչաւոր նոր ֆետերասիոնը:

Նախարար Յովնանեան շնորհակալութիւններ արտայայտեց Լիբանանի Հեծելարչաւոր նոր ֆետերասիոնին անդամները, խոստացաւ ամէն միջոցներու ղիմել յառաջ տանելու համար այս մարզը, տեղական եւ միջազգային իմաստով:

Հեծելարչաւոր նորընտիր ֆետերասիոնին նախագահն է Հրայր Մատուրեան, փոխ նախագահ՝ Վրէժէ Բուրճիքեան, հաշուապահ՝ Զոհրապ Մարգարեան եւ խորհրդական՝ Սիւնաս Մելքոնեան:

### ԻՆՔՆԱՇԱՐԺՆԵՐՈՒ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Տնտեսութեան եւ առեւտուրի նախարար Պատէլ Ֆլէյխան երկն յայտնեց, որ յառաջիկայ Փետրուարին ապահովագրութեան պայմանագիրներու հարցերով վերադող մասնագէտներու յանձնարարութիւնը պիտի սկսի իր աշխատանքներուն ամրապնդելու համար Լիբանանի մէջ ապահովագրութեան դրութեան մարզը:

Ֆլէյխան յայտարարեց նաեւ, որ ինքնաշարժներու ապահովագրութեան գործողութիւնները պետք է ամբողջական մինչեւ Ապրիլ, ապա թէ ոչ պիտի դիմուի օրինական միջոցառումներու:

Ֆլէյխան երկն ընդունեց Լիբանանի ապահովագրութեան ընկերութիւններու սեփականատէրերն ու տնօրէնները, Լիբանանի ապահովագրութեան ընկերութիւններու միութեան նախագահ Արրահամ Մաթոնեանը եւ այլ պաշտօնատարներ, որոնց հետ քննարկեց ապահովագրութեան մարզին վերաբերող հարցերը:

Ֆլէյխան ընդգծեց, որ մինչեւ 5 Ապրիլ 2003 ինքնաշարժները պետք է ապահովագրուին, այլապէս նախարարութիւնը, գործակցութեամբ ներքին գործոց նախարարութեան, պիտի տնօրինէ օրինական պատիժներ օրէնքը խախտող անհատներուն դէմ:

### ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Մոսիկ Չափարեան եւ գաւակը Ժաք եւ Ռոպին Չափարեաններ  
Տէր եւ տիկին Սափո Պատիկեան եւ գաւակունք  
Օր. Արշալոյս Չափարեան  
Տիկին Արաքսի Պոյաճեան եւ գաւակունք  
Չափարեան ընտանիք  
Խաչատուրեան ընտանիք  
Ուէյս ընտանիք  
Եւ համայն ազգականներ կը գումար իրենց հօր, մեծ հօր, եղբոր, հօրեղբոր, մօրեղբոր եւ հարազատին՝

### ՄԱՐՏԻՐՈՍ ՉԱՓԱՐԵԱՆԻ (Ծնեալ՝ Մուսա Լեռ, 1925ին)

մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 24 Յունուար 2003ին, իր բնակարանին մէջ:  
Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի յայտօր՝ Ծարաթ, 25 Յունուար, կէսօրէ առաջ ժամը 11:00ին, Նոր Առանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Այնճարի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահազոյ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին գաւակին՝ Մոսիկ Չափարեանի բնակարանը, ժեյ էլ Տիպ, Մար Թարալ եկեղեցւոյ դիմացի բաղ, «Մարտիրոսեան» շէնք, 4րդ յարկ:

### ՄԱՀԱԶԴ

Տիկին Արփի Առաքեան եւ գաւակները՝  
Պաղտիկ, Արա, Ծանթ եւ Սեւակ  
Վարդան թէյն. Եւ երէցիկին Առաքեան եւ ընտանիք  
Տէր եւ տիկին Նուպար Առաքեան եւ ընտանիք  
Տիկին Լիոնէ Ղազարեան եւ ընտանիք  
Տէր եւ տիկին Վահէ Առաքեան եւ գաւակունք  
Տէր եւ տիկին Արշալ Ճէմճեմեան  
Տէր եւ տիկին Յովսէփ Նանճեմեան եւ ընտանիք  
Տիկին Սիլվա Ճէմճեմեան եւ գաւակունք  
Տիկին Մարիօ Քրիստիան եւ ընտանիք  
Եւ համայն ազգականներ կը գումար իրենց ամուսնոյն, հօր, եղբոր, փեսային, քեներային եւ հարազատին՝

### ԺԱՆ ԱՌԱՔԵԼԵԱՆԻ (Ծնեալ Ալեքսանտրէթ, 1923ին)

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 21 Յունուար 2003, յետ կարճատեւ հիւանդութեան:  
Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ՝ Զորեքշաբթի, 22 Յունուար, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Անթիլիոսի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուրի Ազգային գերեզմանատունը:  
Ներկայ ընդունիլ իբրեւ մահազոյ:  
Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Արթիլիսի մայրուղի, «Հաւա Զիբրն» շէնք, 4րդ յարկ, Հինգշաբթի 23, Ուրբաթ 24 եւ Ծարաթ 25 Յունուարին:

### ՀԱՐԻՐԻ ՊՔԵՐՔԵ ԱՅՑԵԼԵՑ

Մարտինիներու նախարար Սֆէյր պատրիարքը Պքերքէի մէջ երկն ընդունեց վարչապետ Ռաֆիք Հարիրիին, որուն հետ ունեցաւ 45 վայրկեան տեսողութեամբ ղոնփակ հանդիպում մը: Քննարկուեցան լիբանանեան ներքին բեւր յուզող հարցեր եւ շրջանային վարչազանցումները:

Հանդիպումէն ետք վարչապետ Հարիրի յայտնեց, թէ շնորհաւորած է Սֆէյր պատրիարքը նոր տարուան եւ Ս. Մննդեան տօնին առիթով:

Վարչապետ Հարիրի շեշտեց, որ գերագոյն նպատակը կը մնայ ամրապնդել ներքին լիբանանեան միասնակամութիւնը՝ շրջանցելու կամ դիմադրուելու համար շրջանին սպառնացող մարտահրաւերները:

Վարչապետ Հարիրի ըսաւ նաեւ, որ Սֆէյր պատրիարքին հետ արծարծած է նաեւ լիբանանեւտուրիական հեղափոխութեան յարաբերութիւններուն անհրաժեշտութիւնը, յատկապէս ներկայ շրջանային պայմաններուն լոյսին տակ:

Վարչապետ Հարիրի մերժեց պատասխանել լրագրողներու հարցումներուն:

Պքերքէի հիւրերէն դարձան նաեւ ճարտարաբանուտի նախարար Ժորժ Աֆրամ, հաղորդակցութեան միջոցներու նախարար Ժան Լուի Բորտաի եւ երեսփոխան Ժան Օպէյտ:

Միւս կողմէ, վարչապետ Ռաֆիք Հարիրի երկն երեկոյեան մեկնեցաւ Մէրտաական Արաքիս, մասնակցելու համար Ռիատի մէջ կայանալիք լիբանանեւտուրական տնտեսութեան յանձնարարութեան ժողովին, որ տեղի պիտի ունենայ վաղը՝ Կիրակի, Սալման Պրն Ապտէլապի իշխանին հովանաւորութեամբ:

Նախքան Ռիատ իր մեկնումը վարչապետ Հարիրի շեշտեց, որ կատարուի կայանումը կը մնայ իր տնտեսական բարեկարգումներու ծրագրի գործադրութեան, նշելով, որ «Փարիզ - 2» ժողովը այդ ծրագրին մէջ քայլ էր: Ան ընդգծեց, որ կատարուի կայանումը պատասխանատուութիւնն է օգտուելի ժողովին դրական արդիւնքներէն՝ իրականացնելու համար լիբանանեան տնտեսութեան նպաստող քայլերն ու ծրագրերը:

Վարչապետ Հարիրի անդրադարձաւ նաեւ

2003ի պետական պիտուէի նախագիծին եւ վայն որակեց գործարքի եւ իրական նախագիծ մը մատչեց, որ եթէ նոյն թափով շարունակուի աշխատանքը ապա 2005ին կարելի է ստանալ հաւասարակշռուած պիտուէի նախագիծ մը:

Վարչապետ Հարիրի նշեալ յայտարարութիւնները կատարեց Բորայթէ մի մէջ օտար լրագրողներու ի պատիւ սարքած ընթերցան, որուն ներկայ գտնուեցան տեղեկատուութեան նախարար Ղապի Արիտի, արտաքին գործոց նախարար Մահմուտ Համմուտ, ինչպէս նաեւ Լիբանանի մէջ օտար եւ արաբական երկիրներու դեսպաններ, պետական պաշտօնատարներ եւ մեծ թիւով լրագրողներ:

Վարչապետ Հարիրի շեշտեց, որ ներքին թիրախացութիւնները կամ բանալիները միշտ այ մաս կազմած են լիբանանեան քաղաքական կեանքին եւ դրոշմակիր Լիբանանի կերտելիք ապագան՝ նշելով, որ ոչ փոթորիկները ոչ այլ շրջանին ու արաբական աշխարհին սպառնացող մարտահրաւերները պիտի կարենան տապալել Լիբանանը:

### ԿԻՊՐՈՍԻ ՏԱԳՆԱՊԻՆ ԱՌՆՉԱԿԻՑ ԵՐԿՈՒ...

Ծարուակուած Ա. Էջէն

ցած է ՄԱԿի յատուկ պատուիրակ Ալլաթո տէ Սոթո երկն:

Պատասխանելով հարցումի մը, թէ արեւօք երկու համայնքներուն ղեկավարները պիտի կարենան մինչեւ Փետրուար 28 համաձայնութիւն մը գոյացնել, տէ Սոթո իրաւաստի Կիպրոսի «Քիպրիս» թերթին յայտնած է. «Կարճ պատասխանը այո է, սակայն ստիկա շատ դժուար պիտի ըլլայ եւ ծանր աշխատանք պիտի պահանջէ, ինչպէս նաեւ պիշուս կատարելու կամք»:

Կիպրոսի նախագահ Կլաֆթոս Քլեթիտէս եւ թուրք կիպրացի ղեկավար Ռաուֆ Տէնթաշ ներկայիս բանակցութեան մէջ են՝ ՄԱԿի մէկ ծրագրին շուրջ. վերջ տալու համար կղզիին 28 տարուան բաժանումին:

ՄԱԿի կողմէ ճշդուած ժամկէտը կարեւոր է, նկատուեալ նախ, որ ծրագիրը կ'ընթացի համաձայնութեան մը շուրջ, Մարտ 30ին երկու բաժիններուն մէջ հանրաքուէներ, որ-

պէս պի կարելի ըլլայ անոնց Ապրիլ 16ին Եւրոպական Միութեան անդամակցութեան դաշինքը կարելի:

Այլապէս, միջազգային ճանաչում վայելող յոյն կիպրական բաժինը առանձին պիտի անդամակցի Միութեան:

Միւս կողմէ, Յունաստանի վարչապետ Բոսթաւ Սիմիթիս երկն յոյս յայտնած է, թէ ՄԱԿ կիպրոսի համար վերատեսուութեան ենթարկուած խա-

ղաղութեան ծրագիր մը պիտի ներկայացնէ, որպէս պի մինչեւ Փետրուարի վերջ համաձայնութիւն մը գոյանայ:

Ան կը խօսէր Արեւի մէջ թղթակիցներու, տեսակցութիւն մը ունենալէ ետք տրվելիք իր պաշտօնակիցին՝ Քիլի Մակնէ Պոնտէիքի հետ:

Նախապէս նա հանդիպում մը ունեցած է Ալլաթո տէ Սոթոյի հետ:

### ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ...

Ծարուակուած Ա. Էջէն

Դեսպան Օրտուէլ Ներկայացուց միջազգային շարք մը կազմակերպութիւններու եւ կառուցութեան կողմէ ընտելութիւններուն դիտորդական գործունէութեան մասնակցութեան ընտելութիւնները:

Դեսպանին խնդրանքով Արմէն Ռուստամեան պարգարանեց անցնող ամիսներուն ընտելութիւններուն թափանցիկութեան եւ արդարութեան ապահովման նպատակով միջկուսակցական հանդիպումներուն եւ անոնց շարժողող յուշագիրին ստորագրման նախաձեռնութեան ընթացքը:

Հ. Յ. Դ. ներկայացուցիչները կարեւոր նկատեցին օրինական իշխանութիւններուն ձեւաւորումը իբրեւ Հայաստանի պետականութեան ամրապնդման ու երկրակայունութեան գրաւական: Անոնք նաեւ ներկայացուցին Ռոպէրթ Քոչարեանի նախընտրական աշխատախուժման կողմէ առնուող քայլերը:

Դեսպան Ճոն Օրտուէլի նախաձեռնութեամբ կազմակերպուած այս հանդիպման ներկայ էին նաեւ Միացեալ Նահանգներու դեսպանատան քաղաքական եւ տնտեսական բաժինի պետ Փոլ Ռիքպերկ եւ դեսպանատան քաղաքական վերլուծաբան Ալլա Բակուեյ:

### ՄԱՐԱՇԻ ՀԱՅՐԵՆԱԿՅԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ՈգեհոյճճՈՒՄ՝ ՄԱՐԱՇԻ ԱՂԵՏԻՆ

Սիրելի հայրեմակցից, Լիբանանի Մարաշի Շայրեանկացական Միութեան վարչութիւնը այս տարի եւս պիտի ոգեկոչէ Մարաշի աղետին 83րդ տարելիցը:

Նոր Մարաշի հայ երեք յարանուանութեանց եկեղեցիներու մէջ տեղի պիտի ունենան Ս. պատարագ, պաշտամունք եւ հոգեհանգստեան պաշտօններ, Կիրակի, 26 Յունուար 2003ին, մարաշիի հին եւ սիրուն քաղաքում հայրեմակցիցներու հոգեհանգստեան:

Կը հրաւիրուք ձեզ բոլոր, ներկայ գտնուելու վերոյիշեալ եկեղեցական արարողութիւններուն յարգելու համար խնկելի յիշատակը մեր ննջեցեալներուն:

- Ս. Զառասնից Մանկանց եկեղեցի 3աւարտ Ս. պատարագի ժամը 10:00ին
- Ս. Փրկիչ եկեղեցի Շայ Աւետարանական եկեղեցի ժամը 10:00ին

Լիբանանի ՄԱՐԱՇԻ ՀԱՅՐԵՆԱԿՅԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Սիրելի հայրեմակցից, Լիբանանի Մարաշի Շայրեանկացական Միութեան վարչութիւնը այս տարի եւս պիտի ոգեկոչէ Մարաշի աղետին 83րդ տարելիցը:  
Նոր Մարաշի հայ երեք յարանուանութեանց եկեղեցիներու մէջ տեղի պիտի ունենան Ս. պատարագ, պաշտամունք եւ հոգեհանգստեան պաշտօններ, Կիրակի, 26 Յունուար 2003ին, մարաշիի հին եւ սիրուն քաղաքում հայրեմակցիցներու հոգեհանգստեան:

- Ս. Զառասնից Մանկանց եկեղեցի 3աւարտ Ս. պատարագի ժամը 10:00ին
- Ս. Փրկիչ եկեղեցի Շայ Աւետարանական եկեղեցի ժամը 10:00ին

Լիբանանի ՄԱՐԱՇԻ ՀԱՅՐԵՆԱԿՅԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

### ԵԼԵԿՏՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՅՄԱՆԱԺԱՍ ԿԸ ԵՇԴԷ ՄԻՆՉԵՒ ՄԱՐՏԻ ՍԿԻԶՔԸ

Ելեկտրականութեան ընկերութիւնը երկն յայտարարեց, որ որոշած է մինչեւ Մարտի սկիզբը պայմանաժամ տալ պետական այն հաստատութեանց վարչութիւններուն, որոնք տակաւին չեն վճարած ելեկտրականութեան հոսանքի հաշուեցոյցերը:

Եթէ պայմանաժամը չյարգուի՝ փակելու համար դիմած պարտքերը, ընկերութիւնը պիտի ստիպուի հաստատութիւնները զրկել ելեկտրականութեան հոսանքէ: Ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարար Մոհամմէտ Ապտէլ Համիտ Պայտուն քննադատեց այս քայլը եւ գայն նկատեց «հապճեպօրէն տրուած որոշում»:

Պայտուն ըսաւ, որ որոշումը, որ առաւելարար կը վերաբերի ջուրի ընկերութեան, Ընկերային Ապահովագրութեան Ազգային Մատուցի եւ Մարզական Աւանին:

Պայտուն ընդգծեց, որ հարկ է բանակցութիւններ կատարել ելեկտրութեան հետ, որովհետեւ նշեալ հաստատութիւններու վարչութիւններուն յանձնուելիք գումարները գոյութիւն ունին 2002ի պետական պիտուէէն մէջ:

Պայտուն ըսաւ, որ պետութիւնը ելեկտրականութեան ընկերութեան արդէն իսկ արամադրած է շուրջ 4 հազար միլիոն Լ. ոսկի, նախարար անհրաժեշտ է խորհրդակցել ելեկտրութեան նախարարութեան հետ այս գծով: Ան նաեւ անհրաժեշտ նկատեց, որ ջուրի ընկերութիւնը անյապաղ վճարէ իր պարտքերը:

Պայտուն շեշտեց, որ նախապէս իր որոշումով արգիւրեալ է ջուրի ընկերութիւններէն ելեկտրականութեան հոսանքի անջատումը եւ նշեց, որ բոլորին շահութեան կը ծառայէ ստիպել:

Ան աւելցուց, որ կառավարութիւնը չի միջամտեր բարդացնելու համար հարց մը, այլ՝ գայն լուծելու համար:

### 365 ՕՐԵՐԸ ՕՐ ՄԸ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՅԻՆ

Սոյն ձեռնարկին հետեւեալ ազգայինը կը ստանձնէ օրուան մը ճաշի ծախսը՝ 300 տոլար: Տիկին Արաքսի Պերպերեան (Աշրգեան) իր հօր՝ Արշէն Ա. թնջ. Աշրգեանի վախճանման 6րդ եւ ամուսնոյն՝ Պարոյր Պերպերեանի մահուան 8րդ տարելիցին առիթով:

### ԿՈՒՉՈՒԻ

Շատատուրիւն մը կարիքը ունի երիտասարդ փորձառու քարտուղարուի ճիւղը: Հաշուապահութիւն եւ համակարգիչ գիտնալը պայման:  
Հետաքրքրուողները կրնան դիմել՝ ամէն օր առաւօտեան ժամը 9:00էն 4:00: Հեռ. 01-258018 եւ 01-257235 թիւերուն:

### ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՉԻ ՏԱՐՈՒՄ ԱՌԻԹՈՎ

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Ազգային Կեդրոնական Վարչութեան կրօնական ժողովը, նախագահութեամբ՝ Ն. Ս. Օ. Տ. Արամ Ա. կաթողիկոսի, հայրապետական որոշումով 2003 տարին հոչակեց Աստուածաշունչի Տարի:  
Կիրակի, 26 Յունուար 2003ին, առաւօտեան, թեմիս բոլոր եկեղեցիներէն ներս, յընթացս Ս. պատարագի պիտի կարդացուի

### Ն. Ս. Օ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Այս առիթով մեր ժողովուրդի գաւակներուն ուղղած հայրապետական պատգամը:  
Կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդի գաւակները լսելու վեհափառ հայրապետին պատգամը եւ յորդորները, այս տարուան ընթացքին Աստուծոյ խօսքը մեր կեանքին եւ արժեքներուն չափանիշը եւ ուղեցոյցը դարձնելու:

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայկական Երեսփոխանական Գրասենեակը ամէն օր առաւօտեան ժամը 9:00էն կ'ետօր ետք ժամը 5:00 կ'ընդունի դիմումներ՝ հետեւեալ ծառայութիւններուն համար:  
1) Հիւանդանոցային առողջապահական (ուիզարա եւ պետական հիւանդանոցային բուժում):  
2) Ընկերային Ապահովութեան Ազգային Սնտուկ (Տաման):  
3) Ծանր եւ երկարատեւ բուժման կարօտ հիւանդութիւններու դեղորայքի ապահովում:  
4) Գաղթականներու նախարարութեան հետ առնչուող հարցեր:  
5) Բնակարանային հարցերու նախարարութեան (արձեւ) դիմումներ:  
6) Աշխատանքի նախարարութեան հետ առնչուող հարցեր:  
7) Զառաքապետութիւններու հետ կապուած հարցեր:  
8) Ընդհանուր Ապահովութեան Սպասարկութեան (արձեւ) դիմումներ:  
Դիմողները պետք է ներկայանան «Շաղոյեան» կեդրոն, երկրորդ յարկ, Երեսփոխանական Գրասենեակ եւ կամ նախքան ներկայանալը հեռաձայնել 01 - 259881 եւ 01 - 242582 թիւերուն:

Այսուհետեւ ամէն Հինգշաբթի առաւօտեան ժամը 9:00էն 11:00 Երեսփոխանական Գրասենեակը կ'ընդունի ըլլալ երիտասարդութեան մ

**ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԻՄ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ  
ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ  
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱՆ, ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ  
ԵՒ ԱՆՅԿԱՅՄԱՆ ԿԱՐԳԸ**

Լիբանանում Հայաստանի Հանրապետության դեսպանությունը տեղեկացնում է, որ Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում Լիբանանի Հանրապետությունում բնակվող կամ գտնվող, ընտրական իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները կարող են մասնակցել ընտրություններին Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով և Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովի որոշմամբ սահմանում կարգով:

Լիբանանում Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրությունները նախապատրաստում, կազմակերպում և անցկացնում է Հայաստանի Հանրապետության դեսպանությունը:

Լիբանանում Հայաստանի դեսպանության հիւպատոսական բաժնում հաշտառում Հայաստանի Հանրապետության քաղաքացիները ներառում են ընտրացուցակում, որին կարելի է ծանոթանալ Լիբանանում ՀՀ դեսպանության հիւպատոսական բաժնի ընդունարանում: Լիբանանում բնակվող, կամ գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք ներառում են յիշեալ ցուցակում, ընտրություններին մասնակցելու համար մինչև և. թ. Փետրուարի 15ը հրաիբում են Լիբանանում Հայաստանի դեսպանություն / հասցե՝ 28 Rue des Jasmins, Mtayleb. հեռ.՝ 04-418860/ ընտրողների ցուցակում ընդգրկվելու յայտ ներկայացնելու համար: Յայտում պետք է նշուի ընտրողի ազգանունը, անունը, ծննդեան օրը, ամիսը, տարին, անձնագրի համարը, ծամանակաւոր և մշտական բնակության վայրերը (հասցեները):

Ստացում յայտերի հաշտառման հիման վրայ կազմվելու են ընտրողների վերջնական ցուցակները:

Լիբանանում Հայաստանի Հանրապետության դեսպանության շէնքում կազմաւորվելու է տեղամասային ընտրական կենտրոն, ինչպէս նաեւ տեղամասային ընտրական յանձնաժողով:

Լիբանանում Հայաստանի Հանրապետության նախագահական ընտրությունների քուէարկությունը անց է կացուցելու Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքով սահմանում կարգով՝ տեղամասային կենտրոնում:

**ՔՈՐՏԱՇԻ ԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԵ  
«ՍՈՒՍԹԱՔՊԱԼ» ՕՐԱԹԵՐԹԻՆ**

Քջիջային հեռաձայնի ընկերություններում աներկայացուցիչներում և հաղորդակցության միջոցներում նախարար Ժան Լուի Զորտահիի միջոցով բանակցությունները ընկերություններում աշխատանքային պայմանագիրը երկարաժամկետով շուրջ, աւարտեցան երկէ առաւօտեան, առանց պայմանագիրին մէջ նիւթականի փոփոխություններ կատարելու, այսինքն ընկերություններում ի նպաստ գումարը մնաց 15 միլիոն տոլար և որոշուեցաւ, որ իւրաքանչիւր ընկերություն կստի հոգայ քջիջային ցանցի արդիականացման գումարին 30 առ հարիւրը:

Միւս կողմէ, Զորտահիի տեղեկատուական գրասենեակը երկէ հրապարակեց հաղորդագրութիւն մը իրրեւ պատասխան «Սուսթաքալ» օրաթերթին առաջին էջով լոյս տեսած գումարներում:

Հաղորդագրութեան համաձայն, քջիջային հեռաձայնի ընկերություններում կողմէ աներկայացուցիչներում ելեմտական վերջին ցուցակներում հիման վրայ ամսական դրութեամբ կատարուած ներդրումներում միջինով կ'ընթանայ աշխատանքը եւ ոչ մէկ նշան կայ, թէ քացեր արձանագրուած են, ինչպէս կը գրէ «Սուսթաքալ» օրաթերթը:

**ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ**

Ս. թ. Յուլիսի 1-3ը Երեւանում կայանալու է Հայաստանի բժշկական առաջին միջազգային խորհրդաժողովը Հայաստանի, Արցախի և Սփիւռքի առողջապահութեան բնագաւառի ներկայացուցիչների մասնակցութեամբ:

Խորհրդաժողովի մասնակցութեան հրաւերը աշխատանքային ծրագրի, քննարկուելիք հարցերի շուրջ և այլ մանրամասն տեղեկություններ ստանալու համար դիմել Լիբանանում Հայաստանի դեսպանութիւն՝

Հասցե՝ 28 Rue des Jasmins, Mtayleb  
Հեռ.՝ 04-418860

ԼԻԲԱՆԱՆՈՒՄ ՀՀ ԴԵՍՊԱՆՈՒԹԻՒՆ

**ՀԱՅ ԱՐՈՒԵՍԱԳԷՏՆԵՐՈՒ ՀԱՄԱԽՄԱՐՈՒՄ**

269  
**ԱՅՎԱԶՈՎՍԿԻ**  
Սահիկներու երեկոյ  
Շինգաբքի, 30 Յունուար 2003, ժամը 7:00ին  
Կը ներկայացնէ՝  
Արուեստաբան ԴՈԿՏ. ՍՈՎՍԵՍ ԵՐԿԵԼԵԱՆ  
«Կարտըն Թաւուր» պանդոկին մէջ:  
Հեռ.՝ 04-417741  
www.gardentowerhotel.com/mondayforum.htm

**ԵԹԵ**

●Գործ կը փնտռեք  
●Գործաւոր կ'ուզեք  
**ԴԻՄԵՏԷԸ**  
Հեռ.՝ 03-963499:

**ՎԱՐԴԻ ՊՎՊՈՒՔԵԱՆ**  
Ընդ  
**ԿԱՐՊԻՍ ՄԵԼՔՈՆԵԱՆ**

**Նշանուած**  
18 Յունուար, 2003

**ԱՐՅԱՆԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՖՈՆՏԻՆ**

●Արէլ Արէլեանի մահուան բառասուրբին առիթով, Տր Եւ տիկին Պետրոս Խորթեան 10 տոլար

ՀԱՅ ԵՎԵՆԵՏԻՈՅ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ (ՀԵՀՈՍ)

**ԴԱՍԱՆՕՍՈՒԹԻՒՆ**  
Նիւթ  
**ՄԱՔՐՈՊԱՅՕԹԻՔՍ**  
Դասախօս  
**ՄԵԼԳՈՆ ՏԵՄԻՐՃԵԱՆ**

Տեղի կ'ունենայ այսօր՝ Ծաբաք, 25 Յունուար 2003, երեկոյեան ժամը 6:00ին, ՀԵՀՈՍի կեդրոնատեղիին մէջ, Անթիլիան: Երաւիրուած են բոլոր հայ համալսարանականները:

Հ.Յ.Ղ. Լ.Ե.Ս.  
«ՀԱՅԱՍՏԱՆ» Մասնաձիւղ

**ԱՐՅԱՆԵԱՆ ՊԱՅՔԱՐԻ 15 ԱՄԵԱԿ**  
**ՆՈՒԲՐՈՒՄՑ ԶԵՆՆԱՐԿ**  
Կը բանախօսէ ընկ. Մելիք Գարագաւորեան  
\*Գեղարուեստական Յայրագիր  
Տեղի կ'ունենայ Ուրբաք, 31 Յունուար 2003ի երեկոյեան ժամը 8:00ին, Աղբալեան աղուորի Սերժ Թովմասեան սրահէն ներս:  
Հրատեր

البيروت      الاسكندرية      القاهرة      الدار      النصار      السفير

Տեղական մամուլը իր 24 Յունուարի լուսարձակի տակ առած է Պոլսոյ մէջ կայացած շրջանային վեց երկիրներու արտաքին գործոց նախարարներուն հանդիպումը, իրաքեան հարցին առնչութեամբ վերջին իրադարձութիւնները, Հեպրոնի մէջ երեք պաղեստինցիներու սպանութիւնը և լիբանանեան քաղաքական կեանքը լուրջ քջիջային թղթածրարը:

«Նահար» գրած է, թէ Պոլսոյ ժողովը բաւարարուեցաւ Պաղտատի կոչ ուղղելով, որ գործադրէ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդի որոշումները՝ անտեսելով Միացեալ Նահանգները: Ըստ թերթին, Իրաքի դէմ պատերազմը կը ցնցէ Ատլանտեան երկու արկերուն յարաբերութիւնները: Ռամսֆելտ Գերմանիան և Բրանսսան կը նկատէ «Հին Եւրոպա» և Արելիքը կը գովաբանէ:

«Լիուս» նշած է, թէ Իրաքի մասին Պոլսոյ ժողովը յայտարարեց, որ շրջանը պատերազմ մը չի կրնար դիմագրաւել: Ըստ թերթին, ժողովը Իրաքի կոչ ուղղեց ՄԱԿի քննիչներուն հետ գործակցելու: Թերթին համաձայն, Ռամսֆելտի յայտարարութիւնները տագնապ կը յանաջացնեն, իսկ Շիրաք և Շրէտտըր պատերազմը ստոյգ չեն նկատեր: Ուաշինկթըն ջանք կը թափէ «ծեր

Եւրոպայի» հետ տագնապ սահմանափակելու: ՄԱԿի քննիչներուն դէմ ուսանողական ցոյցեր տեղի կ'ունենան Իրաքի մէջ և Պաղտատ տրամաբանական տեղեկագիր մը կը յուսա Պիքսէն: «Անուար»ի համաձայն, Պոլսոյ ժողովը իրաքեան ղեկավարութեան դէմ պահանջներու արտաքին գործոց նախարարներուն ժողովը անտեսեց Ուաշինկթընը և կոչ ուղղեց Պաղտատի ստանձնելու իր պատասխանատուութիւնը:

Թերթը նշած է, թէ ամերիկացի ծերակուտական մը կը սպառնայ կասեցնել իրաքեան քարիւղի մատակարարումը Փարիզի Եւ Մոսկուայի, միւս կողմէ Ֆրանսսա և Գերմանիա կը պատասխանեն ամերիկեան յարձակումներուն: Ըստ «Մուսթաքալ»ի, իրաքեան պատերազմին Եւրոպական մերժողական կեցածքներու շրջափոխութիւնը կը զարկ տա Եւրոպայի մասին հարցերուն: Ռամսֆելտը և Շիրաքը կը յարգեն Պաղտատի կոչը: «Տիար» գրած է, թէ Պոլսոյ մէջ միացեալ հաղորդագրութեան հրապարակումը ուշացաւ: Դամասկոս շեշտեց ՄԱԿի որոշումներուն գործադրութեան վրայ, իսկ Թուրքիա հրաժարեցաւ Սատոսմի մէկնումը պահանջող իր առաջարկէն:

Թերթը նշած է, թէ Իրաքի տագնապին առնչութեամբ ամերիկեան և եւրոպական բանակներ սկսաւ: Ուաշինկթըն կը ջանայ իր դաշնակիցներուն հետ հանդարտութիւնը պահպանել և կը խօսի Ապահովութեան Խորհուրդին մէջ համակարգում կատարելու մասին:

Ըստ «Քիֆաի Արապի»ի, դրացի երկիրներուն միացեալ հաղորդագրութիւնը կը կեդրոնանայ Իրաքի «պատասխանատուութեան» վրայ: Ըստ թերթին, Իրաքի տագնապը կը ցնցէ ամերիկեան-եւրոպական յարաբերութիւնները:

Տեղական լուրերու կարգին՝ թերթերը գրած են, թէ վարչապետ Հարիրի Պքերթէ կ'այցելէ Սֆէյր պատրիարքին հետ նոր էջ մը բանալու: Թերթերը նաեւ անդարադարձ են Լիբանանի մէջ ցուցադրուող Արոմ Էկոյեանի «Արարատ» ծապակէնին:

ները, իսկ Փաուրլը կը յայտարարէ, թէ եթէ Պաղտատի վրայ յարձակում գործեն, իրենք առանձին պիտի չըլլան:

«Պայրաք»ի համաձայն, Փարիզ կրնայ չմասնակցիլ պինտորական յարձակումին: Պոլսոյ մէջ 6 երկիրներու արտաքին գործոց նախարարներուն ժողովը անտեսեց Ուաշինկթընը և կոչ ուղղեց Պաղտատի ստանձնելու իր պատասխանատուութիւնը:

Պաղտատի ստանձնելու մասին՝ «Նահար» գրած է, թէ Գահիրէի մէջ պաղեստինեան երկխօսութեան նախարարներուն ժողովը անտեսեց Ուաշինկթընը և կոչ ուղղեց Պաղտատի ստանձնելու իր պատասխանատուութիւնը:

«Մուսթաքալ» նշած է, թէ հարաւի դիմադրութեան ուժերը կը հարուածեն հրէական բնակեցման վայրի մը պինտորական կեդրոնը:

Ըստ «Պայրաք»ի, եգիպտական փատարուղ մը կոչ կ'ուղղէ պաղեստինեան խմբակցութիւններուն՝ պինտորական գործողութիւնները մէկ տարուան համար կասեցնելու նպատակով:

«Լիուս» լուսարձակի տակ առած է այն երեւոյթը, թէ իսրայէլեան ընտրութիւններուն Լիքուտ կը յառաջդիմէ, իսկ Շարոն քննարկումներ կը կատարէ յառաջիկայ կառավարութեան շուրջ:

Վիճակագրութեանց արդիւնքները կը նախատեսեն Աշխատանքական կուսակցութեան պարտութիւնը և կը յուսան, որ կրօնական կուսակցութիւնը մը գրաւէ երկրորդ դիրքը:

Տեղական լուրերու կարգին՝ թերթերը գրած են, թէ վարչապետ Հարիրի Պքերթէ կ'այցելէ Սֆէյր պատրիարքին հետ նոր էջ մը բանալու: Թերթերը նաեւ անդարադարձ են Լիբանանի մէջ ցուցադրուող Արոմ Էկոյեանի «Արարատ» ծապակէնին:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԿՈՄԻՏԱՍ» ՄԱՍՆԱԾԻՂ  
**ԸՆԹԱԿԱՆ ԸՆԹՐԻԸ**  
Սամակցութեամբ՝  
**ԱՆՏՐԵ ԵՐԱՄԵԱՆԻ**  
(կիթառ և ձեռնադաշնակ)  
Տեղի կ'ունենայ Շինգաբքի, 30 Յունուար 2003ին, երեկոյեան ժամը 8:30էն սկսեալ Համազգայինի աղուորին մէջ, Չոբաք Էլ Պլաք: Հեռաձայն՝ 01-377862:  
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

THE CULTURAL HOUR @ HAIGAZIAN UNIVERSITY  
Invites you to a lecture on  
**Are We On The Eve Of A New Sykes - Picot?**  
By  
**DR. NICOLA ZIADEH**  
Professor Emeritus  
Thursday, January 30, 2003 - 7 P. M.  
Haigazian university auditorium - Kantari

**BARON TRAVEL & TOURISM AGENCY**  
(SALES AGENT FOR ARMENIAN AIRLINES)  
**ՓԵՏՐՈՒԱՐ ԱՍՍՈՒԱՆ ԶԵՐԱՊՏՈՅՏՆԵՐ**  
●9-13 Փետրուար SHARM EL SHEIKH 225 \$ (4 գիշեր + 5 ցերեկ, 5 աստղանի պանդոկ)  
●13-17 Փետրուար SHOPPING IN PRAGUE 490 \$ (4 գիշեր + 5 ցերեկ, 4 աստղանի պանդոկ)  
●DUBAI (2 գիշեր + 3 ցերեկ) 290 \$էն սկսեալ  
**ՎՃԱՐՄԱՆ ԴԻՐՈՒԹԻՒՆ**  
Յաւելեալ մանրամասնութիւններու համար դիմել՝ BARON TRAVEL, Պոլոք Համոն, Մարաշ քաղ, հեռ.՝ 01-263624, 01-241344 և 03-275657 փուէրուն:

**ASHJIAN TOURS**  
ԱՆԿԱՄՍԱԼԻՒ ԲԱՅՑ ԻՐԱՎ ԶԵՐԱՊՏՈՅՏՆԵՐ  
1.- Ս. Սարգիսի, Տեառնցոյապի, St. Valantimeh և ճաւ Ատա տներուն առիթով 12էն 16 Փետրուար, ղեպի ԿԻՊՐՈՍ Լիմասոլ քաղաքը, Pefkos 3 աստղանի պանդոկ, 5 օր փոխան 380 տոլարի միայն 195 տոլար: Իսկ 7 օրը միայն 225 տոլար, իսկ Apollona շքեղ 5 աստղանի պանդոկը փոխան 465 տոլարի միայն 280 տոլար. 7 օրը 325 տոլար:  
2.- 2էն 9 Մայիս Հայաստան «Երեւոն» Ա. կարգ պանդոկ, փոխան 555 տոլարի միայն 333 տոլար: Նախաձեռն, բաց պիւքնով, շատ սահմանափակ տեղեր:  
3.- 19էն 24 Ապրիլ Հալէպ, Տր 2օր, Մարիապոլ, Հասիք, Գամիշի, Թամր, Դամասկոս շքեղ պանդոկներ, երկու գիշեր Հալէպ, երկու գիշեր Տր 2օրի մէջ, անակնկալներ. յիշատակի նուրբեր. զին՝ 145 տոլարէն սկսեալ. ճաւ ձրի վիճակահանութիւն:  
Արձանագրութիւն՝  
ASHJIAN TOURS  
Հեռ.՝ 01-240654, 03-293978 և 01-262177:  
Sales Agent for ARMENIAN AIRLINES

**IGOL MOTOR OIL**  
FUEL CARD

**ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ**  
**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ**  
**ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ**  
Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 փուէրուն:





# Գրական Էջ

## «ՀԱՅՈՒ ԲԵԿՈՐՆԵՐ»ՈՒ ԵՐԳԻՉԸ



Հայ գրականությանը եւ առհասարակ սեւեւ ժողովուրդի գրաւոր մշակույթին մէջ իւրայատուկ համ ու բոլոր ունիւն այն գրողները, որոնց գեղարուեստական խօսքը սերտօրէն կը նոյնանայ իրենց մարդկային կերպարին, ապրած ողբերգութեան կամ ինքնազոհող կենսափորձին հետ: Նման գրողներու պարագային խօսքը կը դառնայ հարազատ պատկերը խնդրոյ առարկայ գրագետին, իսկ փորձառութեանց շղթային իրերայաջորդ օղակներով ամբողջացող կենսագրութիւնը այն լուսարձակը, որ տեսանելի ու պայծառ կը դարձնէ գրագետին հանգրուան առ հանգրուան գարգացող գեղարուեստական ուղիւն, ուր գիրն ու մարդը գեղեցկօրէն կը նոյնանան, կը դառնան գիրար բացատրող անբաժանելի միասնութիւն՝ միս ու ոսկորի գորութեամբ, որովհետեւ նկարագրային այս արժանիքներով ի վերուստ օժտեալ արուեստագետներուն մօտ գրականութիւնը կը դառնայ ոչ միայն կեանքը խորապէս ապրելու գեղեցիկ առիթ մը, այլեւ գայն սրբագրելու: գեղեցկացնելու եւ ապրումին կնիքով հաստատագրելու արարչագործ կերպ:

Երբ պահ մը կը փորձենք կազմել դիմանկարը քսան տարի առաջ կանխահասօրէն այս աշխարհէն հեռացած սփիւռքահայ գրագետ Վահրամ Մավեանի, առաջին հերթին մեր գիտակցութեան պատարը կը գրաւէ ընդհանրական կերպարը վերեւ նշուած այս գրողներուն: Առնուազն ուրուանկարը սփիւռքահայ գրագետին, որ իր թեւաւոր առաջին իսկ ստեղծումներէն՝ սիրային ապրումներուն զուգահեռ քաղցրօրէն հնչեցող կարօտի եւ հաւատարմութեան երգերը Սփիւռքի տղոց, որոնք, իր իսկ բաներով՝ «Մեծցան անձայն, զրկանքով, / Ու կարօտովն հրակէզ՝ հողին, որ մերն է հեռուն...»:

Հայն ու Հայաստանը կեանքի առանցք, գոյութեան գերագոյն իմաստ, ստեղծագործական բռնիքներու մշտակարգէն աւելն ու մղիչ ուժ դաւանած սփիւռքահայ գրագետը եղաւ Վահրամ Մավեան, Հայ Սփիւռքի «բեկորներ»ուն վաւերական նկարիչը, որ շարունակ երգեց աշխարհասփիւռ հայրենիքի ցաւերն ու տենչերը, կարօտներն ու երազները, պոռկոկումներն ու երդումները: Տառապանքով, քախիծով, երագով, երբեմն նոյնիսկ գեղագետ երգիծագիրի ազնիւ երգիծանքով սփիւռքեան դառն պատկերներն եւ անտաշ կերպարներ կարկանդակեց Վահրամ Մավեան յաջողեցաւ դառնալ իր սերունդին այն եզակի ներկայացուցիչը, որ շնորհիւ իր յաջողակ ներկայացուցչութեամբ՝ աշխարհագրի հայ խելակներու անհատական վիշտերը միաձուլեց հաւաքական ապրումներու համընդհանուր բովանդակութեան մէջ եւ իր գիրը շնչաւորեց բանաստեղծական թափանցիկ գրաւորութեամբ ու թելադրական ջերմութեամբ՝ «Յամեցող վերադարձ» (1956) անուն քերթողագիրքէն մինչեւ իր առաջին արձակ հատորը՝ «Հայու բեկորներ» (1965) եւ «Անկապ օրագիր» (1968) խորագրեալ բանաստեղծագործ արձակ էքերէն մինչեւ «Միացող հողներ» եւ «Ամէն տեղ հայ կայ» (1977) անուն հայատրոփ հրատարակութիւններ, որոնց իւրաքանչիւր գրութիւնը մեզի կը ներկայանայ իբրեւ «մէկ պոետիկ դրուագը մեր օրերու հայտնի պատմութեան», ինչպէս կ'ըսէ վաւերական վկայութիւնը գեղարուեստական ոլորտներ բարձրացուցած «Հայու բեկորներ»ու մէկ հերոսութիւնը:

Վերջապէս, գրական ո՛ր սեռին ալ պատկանի հանդիպումէ մը, այցելութեանէ մը, ծանօթութեանէ կամ սեփական կենսափորձէ մը ծնունդ առած Վ. Մավեանի արձակ գիրը՝ վկայագրութիւն, պատմութեամբ, գրականար, օրագրութիւն, ակնարկ թէ հրապարակագրութիւն, գրութիւն կ'անցնի իր գէթուցի քահանայ հօր տաք արիւնը արժանաւորապէս ժառանգած լիիրաւ հայու եւ վեհագի բանաստեղծի ներքին պրիմալիւն, կը պայծառանայ առաւել, կը գեղեցկանայ հայօրէն, կը ստանայ անձնական շեշտ ու դրոշմ՝ եւ սպիտակ բուրբոյն վրայ ձեւ ու կերպարանք կ'առնէ այնպիսի ինքնուրոյն ձեռագիրով մը, որ կը պատկանի «կարօտի կարմիր կրակներ»էն 11 Յունուար 1983ին կարմիր եղած Վահրամ Մավեան անուն տասրապիտ սփիւռքահայ գրագետին, «հայու բեկորներ»ու ազնուածայն երգիչին...

Ս. ԿԻՐԱՎՈՍԵԱՆ

## ԿՈՌԻԵՑԷՔ ՏՂԷՔ ... ԿՈՌԻԵՑԷՔ ՔԱՋՔԱՋ

Կէսօրուան ճաշը անցաւ շատ զուարթ մթնոլորտի մը մէջ: Հաճելի էին մանաւանդ ժողովրդական պարերը՝ որոնք կարճ ընդմիջումներով տեղի կ'ունենային ճաշարանին կեդրոնը, գեղազիններուն կողմէ, իրենց ազգային տարագներով: Պատերուն գարդերը, նուազն ու պարերուն վառվռուն կշռոյթը՝ հաճելի մթնոլորտ մը ստեղծած էին սրահը լեցնող գինիի բոլորին ու կրունկներու թոփուին հետ:

Նոյն զուարթ մարդն էր Պարոն Երամեան ճաշի ամբողջ տեւողութեան, եւ կ'ուզէր որ զուարթ ըլլային նաեւ շուրջինները, մենք: Ինքզինք օտար, անհանգիստ գզգզողը ժիւնէթն էր միայն, Պարոն Երամեանին աղջիկը, երբ մանաւանդ չէր հասկնար ինչ որ կը խօսէր բարբա, կը խօսէինք մենք:

- Չօճուխներս կ'ըսին քի իրենք ֆրանսացի ին, հայ չին զգար ինքզինքնին: Ինքզինքնիդ կրնաք հայ չզգալ, ըսի իրենց անցած օր, բայց զուրկինիդ կը կտրիմ եթէ ուրանաք որ ձեր երակին մէջէն հայու արուն կը վազէ, իմ արունս կը վազէ:

- Ի՞նչ ըսին այդ խիստ յայտարարութեանը, մէջ մտայ ես, թերեւս անտեղի կերպով:

- Ինչ պիտի ըսին, վրաս ինտացին, անցան: Զաչէն ետք քայլերինք պահ մը գիւղին ծառագարդ հրապարակէն: Միւսները կ'երթային առեւելէն, խուճերով: Պարոն Երամեան, գինիին ազդեցութեան տակ դարձած էր աւելի դիւրագգած, աւելի տխուր հիմա: Մտած էր թեւէս ու հին ծանօթներու պէս կը քայլէինք դանդաղօրէն, լուռ: Իմ ներկայութիւնս՝ կարծես նոր առիթ մը ըլլար իր մտեցումը, կրօնաւոր հակութիւնը անգամ մը եւս իրեն յիշեցնելու:

- Գիտե՞ս, ըսաւ յանկարծ, մենք մարշ մը ունէինք ժամանակին, եղանակը կը յիշե՞ս:

- Յայտնի եղաւ որ «Բամբ Որոտան» էր փնտրած երգը: Յայտնեց տակաւին, թէ գիտէր ուրիշ եղանակ մըն ալ, որուն առաջին տողին բառերը միայն մնացած էին միտքը: «Կոռեցէք տղէք, կոռեցէք քաջ քաջ»:

Լուսն պահ մը դարձաւ ու յանկարծ, յանցաւոր մը պէս աւելցուց:

- Մենք չկրցանք կոռելի, շուտ մը յանձնուեցանք: գոնէ դո՛ւք շարունակեցէք

«Կոռելը»:

Ըսաւ ու լուսն սակայն անմիջապէս, կարծես զղջացած այդքանն ալ ըսած ըլլալուն համար, ու անդրադառնալով իր բառերուն ստեղծած մթնոլորտին լրջութեան՝ շարունակեց:

- Գիտե՞ս, ուրիշ աղուր երգ մըն ալ կայ, նոր լսեցի բայց շատ հաւնիր իմ: դիտիս նը հրգէ տէ մտիկ ընեմ: Ըսաւ ու սկսաւ ի՛նք երգել, իրե՛ւ թէ երգել, բայց դարձեալ առաջին տողերը միայն:

«Ո՛րքան ցանկացայ ես մէկին սիրելի»:

- Բայց այս մէկը ուրիշ ո՛ւր, Պարոն Երամեան, ըսի, գարմացած, ասիկա բաղդատարար նոր երգ է:

- Էս ըսոր տիւքն ըլ ունէի, հին բարեկամ մը նուէր խրկիր էր անցած տարի, բայց կոռեցաւ:

- Զիչդ է, շատ բարակ ու նուրբ են նոր տիւքերը, պոետիկ անզգուշութիւն մը բաւական է որ ճաթին:

- Ատ տեսակ ճաթիլ չէր ըսիկա, մասնաւոր կոտրեր էին: Ձանս չհանեցի, իրենք ալ կարծեցին քի կ'լլեցուցին:

«Իրենք»ը կինն ու աղջիկն էին անշուշտ, որոնք, այլապէս այնքան ազնիւ ու բարի, դաւադրաբար ճեղքած էին երգապանակը իր բացակայութեան ու տեղաւորած ետ, իր տեղը, դարակին վրայ: Եղած էին այսքան անզգու՛թ՝ պարզ այն պատճառով, որ Պարոն Երամեան, վաճառատունէն վերադարձին, ամէն օր կը նուագէր զայն վեց, եօթ, ութ անգամ, իրարու ետեւէ, ճանճրացնելու աստիճան տնեցիները՝ որոնց՝ բնականաբար ոչինչ կ'ըսէր անիկա:

Ո՛չ, ատ տեսակ ճաթիլ չէր ասիկա, կոտրեր էին պարզապէս:

Զի՛չդ իր սրտին պէս:

\*\*\*

Քանի մը շարժեալ առաջ երկրորդ անգամ Լիզպոն վերադարձայ, առաջին առիթով հարցուցի Երամեանին մասին:

- Գիտե՞ք ինչ, ըսաւ բարեկամի տիկինը անմիջապէս, ձեր հասնելէն քանի մը օր առաջ ձեր խօսքը եղաւ, ինք ալ ձեզ հարցուց: Ըսինք իրեն, թէ հոս կ'ըլլաք շուտով: Շատ ցաւեցաւ, որ ժամանակ չկայ ձեզի գրե-

լու ու իրեն համար «Որքան ցանկացայ»ին մէկ տիւքը բերէք միասին:

Առանց տեղեակ ըլլալու՝ գոհացում տուած էի իր փափաքին, ու կ'երեւակայէի հիմա թէ որքան հաճելի անակնկալ մը պիտի ըլլար իրեն, երբ լսէր:

Այդպէս ալ եղաւ, երբ երկու օր վերջ երգապանակը յանձնեցի իրեն: Առաւ զայն ձեռքին մէջ, դարձուց մի քանի անգամ ու յաղթական յարեց:

- Հիմա նորէն մտիկ կ'ընինք ամէն օր: ու կարճ դադարէ մը ետք աւելցուց: Էս ըլ կոտրին նը ի՞նչ պիտ ընինք:

- Հոգ մի ըներ, Պարոն Երամեան, ըսի, երեք հատ բերած եմ միասին ճիշդ ալը նկատումով, եւ եթէ պէտք ըլլայ առեւելին՝ կրնանք բերել տալ անմիջապէս: տեսնենք թէ ի վերջոյ ո՞վ պիտի ըլլայ տեղի տուողը, նահանջողը, մենք թէ ֆրանսացիները:

- Գիտե՞ս, ըսաւ, յանկարծ կարեւոր բան մը յիշողի երեւոյթով: Չատիկին, էրթալէզ վերջ հայկական դրօշակ մը կարել տուի եւ տունը փոստի սեղանին վրայ: Տղաքս ու աղջիկս վրաս ինչացին, աս անճաշակ լաթի կտորը մէջտեղէն վերցո՛ւր ըսին: Տունը ի՛մ տունս է ըսի, դուք խօսելու իրաւունք չունիք: Հիմա ամէն անգամ որ տուն մտնեմ աւելի զօրաւոր կը զգամ, կարծես քի միւսակ չիմ ալ: Մեռնելէս ետք գիտիմ, ամէն բան օտարին պիտի մնայ: Ո՛վ գիտէ, ան ատեն ըստեք իրենց մականունն ըլ կը փոխին, ատ ձեռով իրենց վրայէն հայկական վերջին նշանն ըլ սրբուած կ'ըլլայ...

Տեսայ որ թաց էին աչքերը: Անդրադարձաւ ի՛նք ալ յանկարծ, ու իր քաղաքակա՛նութեանն այս շեղումը չնեցի ինքզինքին: Ափին կռնակով սրբեց աչքերը, ու ժպտելով, երգելէ աւելի պոռագ կարծես:

«Կոռեցէք տղէք, կոռեցէք քաջ քաջ»

Ելաւ յետոյ տղէք, հայրաբար նետեց թեւը ուսին, ու այս անգամ աւելի մեղմ ձայնով մը յարեց:

- Մենք չկրցանք կոռելի, շուտ մը յանձնուեցանք, գոնէ դո՛ւք շարունակեցէք կոռել:

(«ՀԱՅՈՒ ԲԵԿՈՐՆԵՐ»)

## ՄԻՐՈՅ ԵՒ ՀԱՒԱՏՔԻ ԵՐԳԵՐ

### ՅԱՄԵՑՈՂ ՎԵՐԱԴԱՐՁ

ԵՐԲԵՄՆ յայսպէս ինձ կը թուի թէ դուն դառնաս պիտի նորէն, Օր մը, ի՛նչ փոխը, թէ տարիներ անցած, անցած ըլլան արդէն, Թէ պիտի գաս սպասումիս դիմաց երկար՝ այն ճամբայէն, Դուն մեկնեցար ուրիշ անձայն, օր մը՝ երբ խեղդ, խե՛ղդ էիր դեռ:

Ու կը թուի ինձ տակաւին թէ քեզի հետ նորէն, նորէն՝, Պիտի դառնան օրերն աղուոր՝ հին քաղցրութեամբ, հեռուներէն:

Չայնիդ մէջ նոյն շեշտը բարի, ու հին ժպիտն աշուրներուդ, Դուն պիտի գաս, կը հաւատամ, օր մը, օրեր յետոյ՝ ի՛նչ փոխը:

Եւ այն ատեն՝ քայլերուդ դէմ այնքան զգուսնք, այնքան գորով Պիտի ծաղկին՝ սփառումիս, կարօտներու երկար ճամբով, Որ կենանք առնէ պիտի քեզմով նորէն, նորէն՝ իմաստ մը խոր:

Երբեմն յայսպէս՝ ինձ կը թուի թէ դուն դառնաս պիտի նորէն, Նոյնիսկ երբ ձիւնն առնէ ճամբան եւ իջնէ մութն ամէնուրեք: Չի տակաւին՝ հոգիներու ճամբան դալար մենք կը պահենք:

### ԵՐԿՈՒ ԱՇՈՒՆ

- Տրտում եւ ինչ ո՞ւ.
- Հարց տուին ծառին Հովերը աշնան: Եւ սարի լանջին Ծառն այդ առանձին Արտասուեց անձայն:
- Ես կը մտածեմ Իմ ցաւին վաղուան Երբ ձմեռը գայ:
- Շշուջաց մեղմիլ Ծառն՝ ու գրկեցին Ճիւղերը վիրար: Ու հովին հիւանդ Համբոյնէն թախտոտ, Օղապար, դէղին, Տէրեւներն անոր Մահերգ հիւսեցին:
- Մի տխրիր այդքան, Պիտի հարսնանաս Դուն կրկին գարնան. Բայց վայ, վայ՝ Մարդուն, Չի ձմեռն անոր Չունի՛ ալ գարուն:

Մեղմ շշուջացին Հովերը աշնան Ու անցան, գացին:

### ՄԵՆՔ, ՏՂԱՆԵՐՆ ՍՓԻՒՌՔԻ

Մեզի համար հողն օտար՝ անհարպաստ մնաց միշտ, Երբ բացուեցան նոյնիսկ մեր կոյս նայուածքները անոր. Հասակներուն մեր եղաւ երբ ան աւիշ ամէն օր, Երբ յոյսերէն մեր մեռնող թաղեցինք մաս մ'անոր մէջ:

Ու ցոյացումն այս օտար երկնի պայծառ կապոյտին, Աչքերուն մէջ մեր դարձաւ պղտոր երանգ մ'անկենդան: Այրեց արեւը՝ բոպիկ ոտքերը մեր, մինչ ինկան Ստուերներ մուք ամպերու՝ մեր քրտնաթոր ձակատին:

Չլացուեցաւ տակաւին մտերմութիւնը մեզի՝ Տուն մ'որուն սեմէն ներս պիտի ամէն իրիկուն, Վաստակին հետ մեր մտնէր երջանկութիւն մը անհուն:

Մե՛նք, տղաներն Սփիւռքի, մեծցած անձայն, զրկանքով, Ու կարօտովն հրակէզ՝ հողին որ մերն է հեռուն, Որուն անցեալն ու ներկան, արիւնին մէջ մեր եռուն.

Մենք կը տանինք գալիքի մը փառքին մեծ, շողշողուն:

### ՄԻՐՈՅ ՊԱՏՐԱՆՔ

Խաղ էր գուցէ, խաղ՝ ինչպէս կ'ընէ անձրեւն ամառուան, Արեւախանձ հողին հետ ու ծառերուն հետ ծարաւ. Անակնկալ՝ չես գիտեր ուրիշ, կ'իջնէ երբ յանկարծ, Մեղմիւ, վախով մը կարծես, օրհնութիւնով մ'ալ անբաւ:

Եւ այն ատեն շունչն այդ նոր որ կ'ելլէ վեր մայր հողէն, Բոյրին հետ զով, մաքրուած տերեւներուն փոշեպատ, Գարուններու կը բանայ պահ մը կարօտը նորէն, Հին, մտերիմ ձայներու կենդանութեամբը պուարթ:

Ու միջոցին մէջ կ'ըլլայ այնքան յստակ ամէն իր, Եւ թափանցիկ, եւ բիրեղ եւ պաղպառուն, թաւշային, Որ ապրիլ կենաքը կ'ուզես կիրքով մը նոր, անձանձիր:

Վայելքիդ մէջ գերագոյն հոն կը մոռնաս դուն սակայն, Թէ կարճատեւ պահ մ'է լոկ անձրեւին խաղն այդ շքեղ, Թէ քիչ յետոյ ամառուան նոյն արեւն է ամէն տեղ:

Վ. ՄԱՎԵԱՆ

# ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՏԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻԶ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ

ՀԱՄԱՑԱՆՑ



## ՏԵՍԱԿԵՏ

### «ԲԱՅՑ ԳԻՏԵՄ ՈՒՐ, ՄԻՆՉԵՒ ՈՒՐ...»

«Եթե աս է պագան, հագա ո՞ր եմ շաբաթական միայն 13 ժամ աշխատանքը, անճանաչան ուղղաթիւս, տան աշխատանքները կատարող մարդամեքենան, «էյ. Սի.»ներով գովազուած փողոցները եւ առանց վարորդի գործող ինքնաշարժ...» Գժգոհութիւն մը, որ կ'արտայայտուէր 1984ին, «Սայրնս 84» ամսաթերթին մէջ լոյս տեսած յօդուածի մը սկիզբը: Ապագայի մասին նախատեսութիւններ կարդացողներ յաճախ յուսախաբ կ'ըլլան, երբ մագաղաթի, բուրբի, կամ համացանցին վրայ իրենց կարգացած մարգարէութիւնը ակնկալուածին չափ շուտ եւ պատկերացուածին նման փառահեղ կերպով չեն իրականացար: Արհեստագիտութիւնը, թող ներուի ըսել, «գլուխը առած կ'երթայ», սակայն մարդու ներհուն մարմնացները երբեք գոհացում չեն գտներ կարծէք:

Ո՞ր եմ արեւի ճառագայթներու ուժով բացող ինքնաշարժները, խօսող համակարգիչները, ճաշ պատաստող մարդամեքենաները, առանց սննդականոնի եւ մարգարի նիհարցընող դեղերը, ո՞ր եմ առանց մեր միջամտութեան երեսներ կամ սրունքներ անխորհրտ սարքերը...

Մարդ արարածը անհամբեր կը սպասէ այս կամ այն «կախարական» սարքին, արտադրութեան, որուն մասին իմացած էր մամուլով: Կը սպասէ մօտիկ թէ հեռուոր պագային իր կենցաղը նուազ տաղտկալի դարձնող այդ հրաշքին... Տարիները կը թաւալին, «հրաշք»ը թերեւս կը հասնի, թերեւս ոչ, եւ եթէ նոյնիսկ հեքիարային արտադրութեան «ժամանումով» երկինքէն երեք խնձոր իյնայ... անոցմէ առնուազն մէկը փութ կ'ըլլայ:

Երջանկութիւն փնտռող Թումանեանի հերոսին նման, մարդ կը մոռնայ իր քիթին տակ ծուրած անհատունը՝ արժեքները եւ կը թափառի արդիականութեան ճանապարհներուն վրայ, կը փորձէ արհեստագիտութեան նորագոյն նուազումները: Կը սպասէ լազոր «կանք»ին. յաջորդ հրաշքին...

Եւ այս բոլորը, որովհետեւ արհեստագիտական վեմագոյն նուազումները անգամ, որոնք կ'առաջնորդեն մտքի հորիզոններու ընդլայնումին, աւելի հաճելի աշխատանքի, աւելի արդիւնաւետ կեանքի, յաճախ մարդս կը գործածէ ինքզինքը ծուլութեան, լնացումի եւ... ճահեցումի առջնորդելու:

Համակարգիչին դիմաց աշխարհի բոլոր անկիւններէն մարդոց ծանօթանալով՝ մարդ կը մոռնայ իրարու հանդիպող աչքերու հրաշքը, ձեռքերով մտքի շրջանակները. իր ժամանակը այս կամ այն սարքին դիմաց, վրան կամ տակը անցնելով՝ կը հեռանայ բնութեան եւ բնականին քաղցրութենէն եւ չի նկատեր, որ մեծ անգամ, որ ժամանակավրէպ կամ «տեմոտե» կը դառնայ իր «հրաշք» սարքերէն մեկը, զայն աղբամանին մէջ նետելով՝ կը նետուան: Կը դառնայ իր «հրաշք» սարքերէն մեկը, զայն աղբամանին մէջ նետելով՝ կը նետուան: Կը դառնայ իր «հրաշք» սարքերէն մեկը, զայն աղբամանին մէջ նետելով՝ կը նետուան:

... Եւ սարքերը կ'արդիականացան տեւաբար, բայց մ'արմինը՝ ոչ, ու բանաստեղծին նման, մարդս ետ նայելով կ'ափսոսայ՝ «Անցնող օրերը խաբեցին զիս եւ ետ չեկան...»:


ԽԱՉԻԿ ՄՈՒՐԱՏԵԱՆ

**ԼՕՆԻ**  
**ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**  
 Բեմադրիչ **ՆԱՐԵԿ ՏՈՒՐԵԱՆ**  
 Լիբանանի մէջ կը ներկայացնէ  
**«WELCOME TO GLENDALE»**  
 կատարելագործւող 2 արարով

Ուրբաթ, 7 Փետրուար 2003, ՎԱՍՍ,  
 Շաբաթ 8 եւ Կիրակի 9 Փետրուար 2003, Երեկոյան ժամը 8:30ին,  
 Կիրակի 9 Փետրուար 2003, ցերեկոյս, կեսօրէ ետք ժամը 4:00ին,  
 «Յակոբ Տր Մեղրնեան» բառերարարահին մէջ:  
 Տոմսերը ստանալ՝ ԼՕՆԻ Չեռարուեստի խանութը,  
 Համազգայինի Գրատունը, Anto Sport-էն,  
 Longline Հաստատութիւն - Վաչէ Աղամեան - Ժայ Էլ Տիպ,  
 Գրատուն Կոմիտաս - Zokak El Blat,  
 ԼՕՆԻ Շրջանային Վարչութեան Գրասենեակէն:

## «ՄԷՅԼ ԹՈՒ ՈՒԷՊ» Ե-ՆԱՄԱԿՆԵՐՈՒ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԾՐԱԳԻՐԻ ՈՒՂԵՑՈՅՑ

«Փոփ 3» ե-նամակի գրուածները, աւանդաբար, ունեցած է գլխաւոր խոցելի կէտ մը. ենթական միայն իր համակարգիչին կրնայ ստուգել ե-նամակները: Արդարեւ, «Փոփ 3» ե-նամակի հասցէներ, որոնք իրենց բաժանորդներուն կը տրուին համացանցի հաստոցութիւն տրամադրող ընկերութիւններու կողմէ (Այ. էս. Փի.), կարելի է օգտագործել գլխաւորաբար «Առութ-նութ էքսփրէս» կամ «Ելուորա» ի նման ծրագիրներու օգտագործումով եւ միայն՝ տուեալ «Այ. էս. Փի.» ընկերութեան կապուած համակարգիչի մը միջոցով: Այս գրուածները չէ, յատկապէս երբ ենթական ճամբորդութեան կամ խախտանքի բերումով հեռու է իր համակարգիչին:




Նման պարագաներու, ան դժուար թէ հաստոցութիւն ունենայ իր տան թէ աշխատավայրի համակարգիչին մէջ բազմամաճ «Փոփ 3» ե-նամակի գրուածները: Ե-նամակներու փոխանակումի համար այլընտրանք մըն է «Ուէպ-մէյլ» գրուածները, որուն է շնորհիւ աշխարհի որեւէ


## ԳԻՏԱԿԱՆ ԿԱՅՔԵՐ ՀԱՄԱՑԱՆՑԻՆ ՎՐԱՅ

Ստորեւ կը ներկայացնենք գիտական հակում ունեցող հետաքրքրական կայքերու փունջ մը.

- <http://volcano.und.nodak.edu>  
Վերոնշեալ հասցեով կայքը այցելողներ կրնան հետեւել աշխարհի որեւէ անկիւնը տեղի ունեցող հրաբխային ժայթքումներու մանրամասնութիւններուն, ինչպէս նաեւ կրնան դիտել լուսանկարները աշխարհի բոլոր կարեւոր հրաբուխներուն:
- [www.webelements.com](http://www.webelements.com)  
[www.chemsoc.org/viselements](http://www.chemsoc.org/viselements)




- [www.netsurf.com/nss](http://www.netsurf.com/nss)  
Այս կայքին բաժանորդագրուելով կարելի է հերթական կերպով ստանալ ե-նամակներ, որոնք գիտական եւ արհեստագիտական թեմայով կայքերու եւ յօդուածներու կապեր կը տրամադրեն:
- [www.howstuffworks.com](http://www.howstuffworks.com)



- <http://whyfiles.news.wisc.edu>  
Աւանդական լրատուութենէն անդին անցնող գիտական յօդուածներ:
- [www.yahoo.com/science](http://www.yahoo.com/science)  
Գիտական բազմաթիւ կայքերու կապեր, ինչպէս նաեւ գիտական վերջին նուազումներուն մասին յօդուածներ:

## ԱՐՇԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

### «ՔՐԻԷՅԹԻՒ ՄՈՒՎՕ» ԷՄ. ՓԻ. 3 ՓԼԷՅԸՐԸ




Այսօրուան գերարդիական «կանէթ»ները, գոհացում պատճառելու համար մարդոց, ոչ միայն դիւրաւ օգտագործելի եւ նորարարութիւններով խնդրուած պէտք է ըլլան, այլ նաեւ պէտք է ծաւալով կարելի եղածին չափ փոքր եւ թեթեւ ըլլան:

«Քրիէյթիւ Մուվօ» էմ. Փի. 3 փլէյբլը գէթ այս երկրորդ չափանիւնի հիմամբ կարելի է նկատել անզուգական «կանէթ» մը: 28 կարմ եւ հրահանի մը ծաւալը ունեցող այս սարքը կարելի է միացնել համակարգիչին եւ հոնկէ սարքին մէջ արձանագրել ձեր ուզած երգերը: Իր փոքր ծաւալին պատճառով «Քրիէյթիւ Մուվօ» միայն 64 մեկապայթ ծաւալ ունի, ինչ որ կը նշանակէ, թէ հազիւ քանի մը տասնեակ երգ կարելի է արձանագրել անոր մէջ:

Շուրջ 150 տոլար արժող այս սարքին մասին յաւելեալ տեղեկութիւններ ներկայացուած են [www.creative.com](http://www.creative.com) հասցեով կայքին մէջ:

## «ԱՅ. ՓԱՌԻԸ» ԼԷՓԹՈՓԸ

Իր գեղեցիկ կառոյցով եւ հզօրութեամբ՝ յատկապէս նշուող այս լէփթօփը կը տարբերի շուկայի վրայ



գտնուող իր մրցակիցներէն, շնորհիւ քանի մը առանձնապատկութիւններու: Նախ՝ «Այ. Փաուեր 5542» աւելի մեծ է, քան՝ հրապարակի վրայ եղող գրեթէ բոլոր «լէփթօփ»ները. ասիկա անպայման ժխտական երեւոյթ չէ՝ արդարեւ, աւելի խոշոր պատասաղ եւ նուազ խոնուած կոճակները կը գան ցոյց տալու, թէ յաճախ լէփթօփներու փոքր ծաւալը կը գայ ի գին այլ գոհողութիւններու, որոնցմէ գերը կացուած է «Այ. Փաուեր»ը:

Սարքը օժտուած է «Փենթիում 4» 2,4 կիկահերց փրոսեսորով, 512 մէկապայթ «ռէմ»ով եւ 40 կիկապայթ «հարտ տրայլ»ով: Լէփթօփին «կշիւ»ը կը բարձրացնեն նաեւ անոր ընդգրկած «Տի. Վի. Տի.» եւ «Սի. Տի. Ար. Տապլիւ»-ն, որ առիթը կ'ընծայէ նաեւ «Սի. Տի.»-ներու արձանագրութեան:

Սարքը կ'արժէ շուրջ 300 տոլար:

## Պատրաստեց՝ Խ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

## ԱՐԱԼԵԱՆ ԱԿՈՒՄԲԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ՊԼՈՒԹԻ ՄՐՑԱՆԱՐՔ 2003ի Ախոյեանութիւն

◆ Տեղի կ'ունենայ «Աղբալեան «Շ. Ս. Շ. Ս.» մարզաշախմատային համալիրի «Սարգիս Սարգիսեան» սրահին մէջ, Մըզիքը:  
 ◆ Մրցաշարը կը սկսի Երկուշաբթի, 3 Փետրուար 2003ի երեկոյան ժամը ձիշդ 8:00ին:  
 ◆ Հիւրասիրութիւն:  
 ◆ Մասնակցութեան համար դիմել համալիրի տնօրէնութեան: Հեռ. 04-716715:

# Մանկապատանեկան



## ԻՆՉՈՒՄԵՆՔ 5 ՄԱՏՆԵՐ ՈՒՆԻՆՔ

Կարգ մը անասուններ ունին 5 մատներով քաթեր, մարդոց նման: Ուրիշներ ունին միայն մեկ, երկու կամ երեք մատներ: Ինչպես, օրինակի համար, ոչխարները, որոնք կարծեք միայն երկու մատներ ունին: Շուները առջևի քաթերը ունին հինգ մատ, իսկ ետևիները՝ միայն չորս, մինչ գորտերուն պարագային առջևի քաթերը ունին չորս մատ եւ ետևիները՝ հինգ:

Ինչո՞ւ մարդ արարածները ունին հինգ մատներ եւ ոչ՝ միւս բոլոր անասունները: Այս հարցը լուսաբանելու համար պետք է միլիոնավոր տարիներ ետ երթալ...

Երբ մենք ուսումնասիրենք 2 միլիոն տարիներ առաջ ապրող նախապատմական մարդոց կենսաբան, պիտի նշամք, թէ անոնք ալ 5 մատներով ձեռքեր եւ ոտքեր ունեցին: Հետեւաբար այս 5 թուանշանը նոր երեւոյթ մը չէ:

Ուրեմն մենք պէտք է երթանք շատ աւելի հեռու անցեալին, հանդիպինք առաջին մարդոց եւ մեծ կապիկներուն միեւնոյն նախահայրերուն, մուշտակով պզտիկ անասուններուն, որոնք կ'ապրէին ծառերուն մէջ: Անոնք ծառերէն կը կախուէին իրենց թաթերով, որոնք ունեցին հինգ մատներ:

Շարունակենք հին աշխարհ մեր ճամբորդութիւնը: 220 միլիոն տարիներ առաջ տակաւին ստնաւոր անասունները չէին կազմաւորուած: Անոնց նախահայրերը ունեցին թեփոտ մորթ մը եւ կը նմանէին սողուններու: Սակայն, անոնք ալ ունեցին հինգ մատներ:


Իսկ եթէ շատ աւելի հեռու անցեալ երթանք, կը տեսնենք, թէ երկրագունդը գրեթէ անընակ է: Գոյուցիւն ունին միջատներ, սակայն՝ ոչ մէկ ողնաւոր կենդանի: Հակառակ ասոր, մեր հեռաւոր նախահայրերը արդէն գոյուցիւն ունեցին: Սակայն ո՞ւր են անոնք: Մենք անոնց կրնանք հանդիպիլ ջրերին մէջ: Անոնք ձուկերն են: Հե-

տեւաբար ձուկերուն եւ սողուններուն միջեւ պատահած է բան մը: 360 միլիոն տարիներ առաջ ընդարձակ ճահիճներու ցեխերուն մէջ կը կակազեն աւելի քան մէկ մեթր երկարութիւն ունեցող հսկայական սալամանտրներ:

Այս անասուններէն մաս մը կը գործածէ իր լողակները՝ սողալու համար, երբ ջուրը շատ խորունկ չէ: Անոնք թռչելու տակաւին լաւ չեն կազմաւորուած. այսուհանդերձ անոնք կարելիութիւնը կ'ընձեռեն ազատ շնչելու: Ուրիշ անասուններ արդէն ունին իսկական թաթեր: Անոնք նոյնիսկ ջուրէն դուրս կ'ելլեն միջատ մը կամ որդ մը որսալու համար: Այս վեցերորդ մատ ունեցող անասուններէն մաս մը ունի չորս մատներով թաթեր, ուրիշներ ունին հինգ, վեց, եօթը, նոյնիսկ ութ մատներ: Անշուշտ այս բոլորէն է կենդանի կրցած շարունակել ապրել: Մենք չենք գիտեր, թէ անոնք ինչո՞ւ անհետացած են: Սակայն վերապրած են... 5 մատներ ունեցող էակները: Ինքնաբերաբար անոնց յաջորդող սերունդները պահած են իրենց նախահայրերուն կողմնակից կանկանները:

որոնք գետեղուած են եղունգներուն (կճղակներէն): Սակայն, անոնք ալ ունեցին հինգ մատներ: \* \* \* Բացի ձուկերէն, բոլոր ողնաւոր անասուններուն հիմնական տիպարը չորս թաթերով եւ հինգ մատներով էակն է: Սակայն կենսաբան Նոյնիսկին մէջ տարբեր փոփոխութիւններ աեղի ունեցած են: Կարգ մը կենդանիներ

ունեն 3 մատ: Չղիկը տակաւին ունի իր ծագումէն մնացած հինգ մատները: Սակայն անոնք երկնցած են, որպէսզի կարենան բռնել անոնց միջեւ գոյուցիւն ունեցող մորթը: Այս չղիկին թեւը բաւական տարբեր է թռչուններու թեւերէն: Թռչունները պահած են միայն երեք պզտիկ մատներ՝ թեւերուն ծայրը, որոնք ծածկուած են փետուրներով օտուած մորթով մը: Իսկ ծովային ստնաւորները: Անոնք ծով վերադարձած են: Անոնց թաթերն ալ պատշաճած են իրենց ապրելակերպին: Սակայն անոնք ձուկերու լողակներուն նման չեն եղած: Օրինակի համար, այս ձեռով զլիկներուն տափակ թաթերուն մէջ պահուած են հինգ մատներով իսկական ձեռքեր:



## ԳԻՏԻՐ, ԹԷ 3 ՄԻԼԻԱՌ ՏԱՐԻՆԵՐ ԱՌԱՋ...

Մեր մոլորակին վրայ կենսաբան ովկանոսներուն մէջ մտաւորապէս 3 միլիառ տարիներ առաջ: Հոն է, որ առաջին բոյսերը եւ առաջին անասունները ապրեցան եւ զարգացան: Բոյսերը առաջին կենդանի էակներն էին, որոնք ձգեցին այս ծովային միջավայրը մտաւորապէս 430 միլիոն տարիներ առաջ: Ապա կարգն էր անողն անասուններուն՝ սարդեր, որդեր եւ թռչամորթներ: Անոնք կամաց-կամաց գաղութներ կազմեցին ցամաքին վրայ: Կարգ մը անասուններ կը սնանէին բոյսերով: Ուրիշներ կ'որսային այլ անասուններ, որոնք իրենց հետ կամ իրենցմէ քիչ առաջ լքած էին ծովը: Մտաւորապէս 370 միլիոն տարիներ առաջ առաջին ողնաւոր անասունները ջուրէն ելած են՝ ազատ օդին ապրելու համար: Անոնք շատ շուտ աճած են, որովհետեւ ուտելիք առատ էր եւ չկային տակաւին որսացող մեծ անասունները, որոնք կրնային զիրենք ուտել:

## ՏԱՐՈՐԻՆԱԿ ԱՇԽԱՐՀ ՄԸ

• «Էյֆէլ» աշտարակին 200 հազար քառ. մեթր մակերեսը մաքրելու եւ զարմեալ ներկելու համար աշխատած են 25 ներկարարներ, որոնք գործածած են 60 թոն ներկ:



• Ստեղծուած է մագնիսական դրամատուն մը, այն անձերուն համար, որոնք կը վախնան ճաղատ դառնալէ:

• Աշխարհի ամէնէն գեղեցիկ աղամանը կը կոչուի «Վուլֆէն»՝ ան 179 քարաթ է:

• Տարօրինակ դպրոց մը՝ վիսկո խաղերու դպրոցը բացած է իր դռները, ուր «աշակերտները» կը սորվին խաղ մը «չինել»...


• Մրցանիշներու աշխարհէն - Աշխարհի ամէնէն մեծ պտուղին հիւթը՝ 3280 կիթր:

- Աշխարհի ամէնէն մեծ սփակեթիի պնակը՝ մէկուկէս թոն:


- Միացեալ Նահանգներու մէջ Նոր Տարուան վիճակահանութեան գումարը՝ 315 միլիոն տոլար, շահած է մէկ անձ:

- Աշխարհի ամէնէն մեծ կօշիկը՝ 5,5 մեթր (2,25 լայնք եւ 1,38 երկայնք), շինուած է Ֆիլիպինի մէջ:


## ԺԱՄԱՆՅ



Կրճա՞ս 3 ուղիղ գիծեր քաշելով պատկերը բաժնել 4 մասերու, ուր իւրաքանչիւրին մէջ գոյութիւն ունենան ծառ մը, կոճղ մը, դրօշակ մը, ժայռ մը եւ պզտիկ նապաստակ մը:



Կրճա՞ս օգնել այս մարզիկին՝ գտնելու ելքի ճամբան, առանց ձաճմունքի վրայ դրօշակի հանդիպելու:



Այս խաղը կրճաս խաղալ ընկերոջ մը հետ: Իւրաքանչիւրը իր կարգին կը մտնէ գառը եւ քարը կը յառաջացնէ կլորակներուն վրայէն մինչեւ կողովը: Սակայն, եթէ քարը գնդակի մը վրայ հասնի, խաղողը իր յաջորդ կարգը կը կորսնցնէ:

## ՄԱՏՆԵՐՈՎ ՀԱՇՈՒԵՆՔ

Քրիստոսէ աւելի քան 250 տարիներ առաջ մայաները հնարած էին հաշուելու իւրաքանչիւր ձեւ մը: Անոնք թիւերը կը գրէին երեք նշաններով. խեցի մը՝ Օին համար, կէտ մը՝ 1ին համար եւ գծիկ մը՝ 5ին համար: Օրինակի համար, քով-քովի երեք կէտ, երեք գծիկներու վրայ (—) կը համապատասխանէր 18ին: Մայաները չէին գործածեր տասնորդական դրութիւնը (հիմնուած 10ին վրայ՝ 1,10,100,1000...), այլ՝ քսանորդական դրութիւն մը (հիմնուած 20ի վրայ՝ 1, 20, 400, 8000...), որ կը համապատասխանէ մատներու (ձեռքերուն եւ ոտքերուն) ընդհանուր գումարին:

## «ԱԶԳԱԿ»Ի ՄԷՉ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, ՄԻՆՉԵԻ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍԿ 5:00: ՄԱՂԱՋԴՆԵՐԸ բացառութիւն են: Մահազդ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ պայմ հրատարակելու հնարաւորութիւն կայ:

## Պատրաստեց՝ ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

810 ՀԱՅ ԱԻՏ. ԳՈՒԼԵՃԻ 80 ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

ՃԱՋԻ ԼՈՒԱԳԱՀԱՆԴԵՍ ԱՌԻԹԻՒՆԻ ԶԵԱՆԻ ԵՒ ԻՐ ԽՈՒՄԲԻՆ ԿՈՂՄԷ

Շաբաթ, 8 Փետրուար 2003, երեկոյեան ժամը 8:30-ին Հայ Աւետ. Ա. Եկեղեցւոյ հանդիսարանին մէջ

Մուտքը տոմսով



Տոմսերը ստանալու համար դիմել զԱՐԻՆ ԽԱՍՏ., ԳԵՈՐԳԵԱՆ ՂԵՏԱՐԱՆ (Պոստ Համմուտ) ՄԻՍԱ (Չափա), MULTI-OBJET (Սրճադր) եւ ԴՊՐՈՅԵՆ (Հեռ. 01/349816)



# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



# ԱՇԽԱՐՀ



ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՊԱՍՔԵԹՊՈԼ

## ՎԱՂԸ

### ՌԻԱՏԻ ՖԵՅԹՐՈՒՆ - Հ.Մ.Ը.Մ.

Լիբանանի պասքեթպոլի տղոց Բ. դասակարգի ախոյեանութեան դարձի 4րդ հանգրուանի մրցումներուն վաղը՝ Կիրակի, Սաթէս ժողովարանի մրցումները կ'ընդունուին Կիրակի, Սաթէս ժողովարանի մրցումները կ'ընդունուին Կիրակի, Սաթէս ժողովարանի մրցումները կ'ընդունուին...

Դարձի մրցումները յաղթանակով սկսած, սպա երկու պարտութիւն կրած Հ.Մ.Ը.Մ.ի տղաքը ոչ մէկ ճիգ պէտք է խնայեն պարտութեան մատնելու համար իրենց մրցակիցը, երթին նման անկէ պարտութիւն չկրելու համար, երբ մէկ կէտի տարբերութեամբ (70-69) պարտուած էին անկէ:

Վերոնշեալ մրցումէն չորս ժամ առաջ, ժամը 5:00ին, Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս Դ. դասակարգի ախոյեանութեան զօնով (Առնալիբանանի նահանգ) կը ճակատի Սաթէս Մար Տումէթի ղէմ:

Հ.Մ.Ը.Մ.ի համակիրներէն կը սպասուի ներկայ ըլլալ այս երկու մրցումներուն եւ քաջայելել Հ.Մ.Ը.Մ.ի տղաքը, անոնց յաղթանակը միասնաբար կերտելու համար:

Նշենք, թէ դաշտերուն մուտքը ձրի է:

ՍՊԱՆԻՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅՆՆԵՐՈՒԹԻՒՆ

## ԱՅՍՕՐ՝ ԱԹԼԵԹԻԸՍ ՍԱՏՐԻՏ - ՌԷԱԼ ՍՈՍԻԵՏՍ

Սպանիոյ ֆուտպոլի ախոյեանութեան 19րդ եւ երթի վերջին հանգրուանի մրցումներուն, այսօր պարագլուխի դիրքը գրաւող Ռեալ Սոսիետատ, որ ցարդ կը մնայ անպարտելի միակ խումբը, պիտի այցելէ Ցրո ղիրքը գրաւող Աթլետիքո Մատրիտի դաշտը:

Սոսիետատ, որ այժմ երեք կէտի առաւելութիւն մը ունի 2րդ դիրքը գրաւող Ռեալ Մատրիտի վրայ, նոյնիսկ հաւասարութիւն մը արձանագրելու պարագային պիտի հանդիսանայ երթի ախոյեան: Սոսիետատ դաշտ պիտի ներկայանայ առանց որս միջնապահ Վալերի Քարվինի, որ վիրաւոր ըլլալով յառաջիկայ երեք շաբաթներուն ալ պիտի բացակայի դաշտերէն:

Յարդ վիսայ մէկ պարտութիւն կրած Ռեալ Մատրիտ վաղը հիւրը պիտի ըլլայ 15րդ դիրքը գրաւող Աթլետիքո Պիլպաոյի:

Մայրաքաղաքի կապով, որ իր կատարած վերջին 12 մրցումներուն պարտութիւն չէ կրած, իր ղէմ պիտի ունենայ իր նախկին մարպիչը՝ Եուլի Հայնքսը, որուն հետ 1998ին հանդիսացած էր «Չէմփիոնս Լիկ»ի ախոյեան:

Նշենք, թէ Հայնքս եւս այժմ գրեթէ ենթարկուած է Պարսելոնայի մարպիչ Լուիս Վան Կասլի ճակատագրի: Ռեալ Մատրիտի վրայ պարագային կը կարծուի, որ Վան Կասլ պիտի մնայ առանց պաշտօնի:

Պարսելոնա (10րդ), որ վաղը հիւրը պիտի ըլլայ Սելթա Վիլյոյի (6րդ) յաղթանակէ այլընտրանք չունի, որովհետեւ պարտութեան մը պարագային կը կարծուի, որ Վան Կասլ պիտի մնայ առանց պաշտօնի:

Պարսելոնա, որ 1942ին ի վեր այս դիրքին վրայ չէր գտնուած, իր 32 այցելութիւններէն 16ին միայն յաջողած է յաղթական վերադառնալ Վիլյոյի դաշտէն:

Ստորեւ՝ 19րդ եւ երթի վերջին հանգրուանի մրցումներուն յայտագիրը (փակագիծին մէջ նշուած են անոնց գրաւած դիրքերը՝ ընդհանուր դասաւորման մէջ, իսկ ժամերը պէտք է նկատի ունենալ Պէլլոսի ժամով):

ԱՅՍՕՐ	ԺԱՄ
Աթլետիքո Մատրիտ (8) - Ռեալ Սոսիետատ (1)	22:30ին
ՎԱՂԸ	
Ռեալ Պեթիս (5) - Վիարեալ (12)	18:00ին
Էսփանիոլ (19) - Տեփոթիս Բորուս (4)	18:00ին
Օսասունա (17) - Ռասիսկ Սանթամարի (16)	18:00ին
Հուելյա (20) - Ռայո Վայեքանս (18)	18:00ին
Վալենսիա (3) - Սելիլա (11)	18:00ին
Ռեալ Վալադոլիդ (9) - Ալաես (14)	18:00ին
Մալալկա (13) - Մալորքա (7)	19:00ին
Աթլետիքո Պիլպաո (15) - Ռեալ Մատրիտ (2)	20:00ին
Սելթա Վիլյո (6) - Պարսելոնա (10)	21:30ին

## ՍԹՐԱԶՊՈՒՐԻՍ ՄԷՋ ԸՆՆԱՐԿՈՒԵՑԱԲ...

Թեան ընդդիմութիւնը, ինչ որ խանգարած է հարցին մասին յստակ դիրքորոշման մշակումը: Տէր Ստեփանեան դիտել տուած է, թէ Թուրքիա կը շարունակէ Հայաստանը ենթարկել տնտեսական շրջափակման՝ յստակապէս խոչընդոտելով ցամաքային փոխադրամիջոցներու հարողակցութեան ուղիներուն օգտագործումը: Անգարայի այս քաղաքականութիւնը եւ երկու պետութիւններուն միջեւ դիւանագիտական յարաբերութիւններուն բացակայութիւնը, Տէր Ստեփանեանի համաձայն, կը հակասեն Եւրոպական Խորհուրդի սկզբունքներուն:

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅՆՆԵՐՈՒԹԻՒՆ

## ՎԱՂԸ՝ ԻՍԼԱԿ ՊԸՐԺ ԾԻՍԱԼԻ - Շ. Մ. Ը. Մ.

Լիբանանի ֆուտպոլի Բ. դասակարգի ախոյեանութեան 13րդ եւ երթի վերջին հանգրուանի բացման մրցումին, երէկ Թրիփոլի Բարաքապեատարանի դաշտին վրայ տեղի ունեցաւ Ռիատա Ուալ Ատապ - Հըրրիէ Մաթալայ Այնճար մրցումը. անկէ վերջ գտաւ 3-3 արդիւնքով: Իր արձանագրած այս հաւասարութիւնէն ետք իսլահ 18 կէտով մնաց 3րդ դիրքին վրայ, իսկ Հըրրիէ 8 կէտով նախավերջին դիրքին վրայ:

Ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը գրաւող Հ. Մ. Ը. Մ.ի ներկայացուցչական խումբը, որ ցարդ անպարտելի միակ կազմն է, թէեւ հանդիսացած է երթի ախոյեան, առանց նկատի ունենալու վաղուան իր կատարելիք մրցումը, սակայն այդ մէկը չի նշանակեր, որ Իսլահ Պրոթ Շիմայի ղէմ մեր մարտիկները անհոգութեամբ դաշտ պիտի ներկայանան: Ընդհանուր առմամբ, անոնք ոչ մէկ ճիգ

պիտի խնայեն երեք կէտով վերադառնալու Պէյրութ, իրենց ետին գտնուող մրցակիցներէն բացի եւս հեռանալու եւ դարձի մրցումները սկսելու յաւելեալ պատասխանատուութեամբ, որպէսզի 2002-2003 եղանակին աւարտին անոնք վերըստին բարձրանան Ա. դասակարգ, ուր է անոնց իսկական տեղը:

Ստորեւ՝ շարաթավերջի մրցումներուն յայտագիրը:

### Ա. ՊԱՍԱԿԱՐԳ (10րդ ՇԱԲԱԹ՝ 25 ՅՈՒՆԻՍԻԱՐ)

Պրոթ - Անտ	ԺԱՄ	ԴԱՇՏ
Շապապ Սահէլ - Սալամ	2:15ին	Մ. Աւան
ԿԻՐԱԿԻ, 26 ՅՈՒՆԻՍԻԱՐ		Պէյրութ
Անսար - Ալիս Ալյէ	2:15ին	Պէյրութ
Օլիմփիք - Մապարա	2:15ին	Պ. Համուտ
Թատամոն Սուր - Սաֆա	2:15ին	Սուր
Սաթես - Նըթմէ	2:15ին	Մ. Աւան

### Բ. ՊԱՍԱԿԱՐԳ (13րդ ՇԱԲԱԹ՝ 25 ՅՈՒՆԻՍԻԱՐ)

Ռոյոթ մրցումներն ալ տեղի կ'ունենան ժամը 2:15ին.	ԴԱՇՏ
Ռասիսկ - Իթրիմահի	Պ. Համուտ
Մահապպա Թրիփոլի - Հ. Մ. Մ.	Թրիփոլի
ԿԻՐԱԿԻ, 26 ՅՈՒՆԻՍԻԱՐ	
Թատ. Նապարիէ - Շապ. Թրիփոլի	Նապարիէ
Նահատա Պար էլիաս - Ահլի Սալա	Խիարա
Իսլահ Պրոթ Շիմայի - Հ. Մ. Ը. Մ.	Իսլահ

ՊՈՒՆՏԵՍԼԻԿԱ

## ԱՅՍՕՐ ԿԸ ՍԿՍԻՆ ԴԱՐՁԻ ՄՐՅՈՒՄՆԵՐԸ

Վեց շարժուած ձմեռնային արձակուրդէ մը ետք, այսօր կը վերսկսին Գերմանիոյ ֆուտպոլի ախոյեանութեան (Պուներսլիգ) մրցումները. տեղի պիտի ունենան

18րդ եւ դարձի առաջին հանգրուանի ճակատումները:

Աշնան ախոյեան հանգրուանը Պայէրն Միւնխի, երթի մրցումներուն աւարտին յաղողեցաւ հաւաքել 39 կէտ, վեց կէտի առաւելութիւն մը ունենալով 2րդ դիրքը գրաւող Պորուսիա Տորթմունտի վրայ:

«Չէմփիոնս Լիկ»ի ֆուտպոլի մրցաշարէն դուրս մնացած Պայէրն Միւնխի, որ վաղը իր դաշտին վրայ պիտի հիւրընկալէ Պորուսիա Մէոնընի կազմը: Սարգիզ Օթմար Հիցֆէլտի կազմէն պիտի բացակային սակայն, ֆրանսացի Ուիլի Սանիոյ, պոսնիացի Հասան Մալիհաժիչի, փարակուէլցի Ռոբէ Սանթա Գրուզ եւ գերմանացի Սեպասթիան Տէչը:

լըր (բոլոն ալ վիրաւոր): Լաւագոյն պաշտպանողական գիծը ունեցող Պորուսիա Տորթմունտ, որ ստացած է 13 կըլ, այսօր հիւրը պիտի ըլլայ Կորպոր Պերլինի (9րդ):

2րդ դիրքին վրայ մնալու համար, Տորթմունտ անպայման յաղթանակի պէտք ունի՝ նկատի ունենալով, որ անկէ առաջ միայն կ'ուզէ յաղթել իր առաւելութեամբ կը գերազանցէ Վերտըր Պրեմըրը,

որ այսօր իր դաշտին վրայ պիտի հիւրընկալէ Արմիտա Պրիֆլէտը (11րդ): Պայէրնէն ետք (որ նշանակած է 36 կըլ) երկրորդ լաւագոյն յաղթանակողական գիծը ունեցող (34 կըլով) Պրեմըրն, մեծ բան ունի վստահելիք իր պրագրիցի յառաջապահ Ալլթիմի, որ իր նշանակած 13 կըլով, այժմ կը գրաւէ կոլպորթներուն ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը:

Ստորեւ՝ 18րդ եւ դարձի առաջին հանգրուանի մրցումներուն յայտագիրը (ժամերը պէտք է նկատի ունենալ Պէյրութի ժամով, իսկ փակագիծին մէջ նշուած են անոնց գրաւած դիրքերը ընդհանուր դասաւորման մէջ):

ԱՅՍՕՐ	ԺԱՄ
Պոլտու (8) - Նիւրնբերգ (12)	16:30ին
Հանգա Ռոսթոք (13) - 1860 Միւնխ (6)	16:30ին
Հանովըր 96 (16) - Համպուրկ (7)	16:30ին
Վերտըր Պրեմըր (3) - Արմիտա Պրիֆլէտ (11)	16:30ին
Վոլֆսպիտ (10) - Շալքէ (4)	16:30ին
Քայզերսլաուեր (17) - Շթուրկարթ (5)	16:30ին
Հերթա Պերլին (9) - Պորուսիա Տորթմունտ (2)	16:30ին
ՎԱՂԸ	
Պայէրն Լեյքերըզըն (14) - Գորպուս (18)	18:30ին
Պայէրն Միւնխի (1) - Պորուսիա Մէոնըն (15)	21:00ին

ԲԱՆԸՈՒ

## ՊԱԹԻՍԹՈՒԹԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՄՐՅՈՒՄԸ «ՍԱՆ ՍԻՐՕ»Ի ՄԷՋ

Իտալիոյ ֆուտպոլի ախոյեանութեան (Քայչիո) 18րդ եւ դարձի առաջին հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Ա. Սե. Միլան, քիչ մը ղեղադրման մը ունի կատարելիք, երբ այցելէ Ռատինգի դաշտը: Թէեւ այս վերջինը կը գրաւէ 8րդ դիրքը, սակայն անիկայս եղանակին իր դաշտին վրայ ցարդ պարտութիւն չէ կրած իր դաշտին վրայ:

Վերոնշեալ մրցումէն աւելի հետաքրքրական պիտի ըլլայ «Սան Սիրո»ի մէջ տեղի ունենալիք մրցումը, որ արժանաբան յաղթանակ կապիտէլ Պարիսիոնա առաջին անգամ ըլլալով պիտի կրէ իր նոր խումբին՝ Ինթեր Միլանի շապիկը՝ Էմիլիոյի ղէմ (10րդ) տեղի ունեցած մրցումին: Ինթերի մաս կազմող ուրուկուէլցի փութիլըր Ալլարո Ռեքոպա, 33 տարեկան արժանաբան ակնարկելով կ'ըսէ, թէ 14 տարուան սպասումէ մը ետք իրենց խումբը պիտի

տիրանայ ախոյեանութեան, վստահաբար Պարիսիոնայի շնորհիւ, այնպէս ինչպէս ալ Ա. Էս. Ռոմայի միանալով առաջին իսկ տարին անոր հետ շահեցաւ Իտալիոյ ախոյեանութիւնը: 4րդ դիրքը գրաւող Եուվեթուս, որ վաղը պիտի հիւրընկալէ Փիաչենցան, այժմ իր ուշադրութիւնը պիտի կեդրոնացնէ միայն Քայչիոյին, նկատի ունենալով, որ անիկա Իտալիոյ ֆուտպոլի բաժնակիր մրցաշարէն դուրս

մնաց, երբ քառորդ տարտականի դարձի մրցումին 2-0 արդիւնքով պարտութիւն մը կրէ Փերուճիայէ: Անիկա, երթին եւս իր դաշտին վրայ պարտուած էր 2-1 արդիւնքով: Եուվեթուս կը բացակայէին սակայն Սիւսանտրո Տէլ Փիեո եւ Տալիա Թրեպէլէ:

Փերուճիայի հետ կիսաբարտական հաստող խումբը եղան՝ Ա. Էս. Ռոմա, Ա. Սե. Միլան եւ Լացիո Ռոմա: Կիսաարտականի Փերուճիա պիտի ձակարկէ Ա. Սե. Միլանի դէմ:

Ստորեւ՝ 18րդ եւ դարձի առաջին հանգրուանի մրցումներուն յայտագիրը (ժամերը պէտք է նկատի ունենալ Պէյրութի ժամով, իսկ փակագիծին մէջ նշուած են անոնց գրաւած դիրքերը):

ԱՅՍՕՐ	ԺԱՄ
Մոտենա (12) - Արալանքա (14)	19:00ին
Բոնո (18) - Ա. Էս. Ռոմա (9)	21:30ին
ՎԱՂԸ	
Պոլոնիա (6) - Թորին (17)	16:00ին
Պրեշիա (13) - Փարմա (7)	16:00ին
Ինթեր Միլան (3) - Էմիլիո (10)	16:00ին
Եուվեթուս (14) - Փիաչենցա (15)	16:00ին
Լացիո Ռոմա (2) - Ռեճինա (16)	16:00ին
Փերուճիա (11) - Քիեո (5)	16:00ին
Ռատինգի (8) - Ա. Սե. Միլան (1)	21:30ին

ԱՄՍՐԱԼԻՈՅ ԹԵՆԻՍԻ ԲԱՅ ՄՐՅԱՇԱՐԲ

## - ՇԻՈՒԹԼԸՐ ԳԱՍԱԻ ԱՄԱՐՏԱԿԱՆԻՆ - ԱՅՍՕՐ ԱՂԶԱՆՑ ԱՄԱՐՏԱԿԱՆԸ, ԻՍԿ ՎԱՂԸ՝ ՏՂՈՅԸ



Ռայնըր Շիուքլըր

Աւստրալիոյ թենիսի կրան շրջմի բաց մրցաշարէն 13րդ օրը՝ երէկ տեղի ունեցաւ տղոց կիսաարտականի երկրորդ ճակատումը՝ 9րդ դասուած Էնտի Ռոտիքի եւ 31րդ դասուած Ռայնըր Շիուքլըրի միջեւ: Ռոտիքի յաղթանակին պարագային, տղոց մրցումն ալ, աղջկանց աւարտականին նման պիտի ըլլար գոտ ամերիկեան, սակայն գերմանացին արգելք հանդիսացաւ, երբ 7-5, 2-6, 6-3 եւ 6-3 արդիւնքով պարտութեան մատնեց 20 տարեկան իր մրցակիցը՝ 2 ժամ եւ 19 վայրկեան տեւած մրցումին ընթացքին:

Իր արձանագրած այս յաղթանակէն ետք 26 տարեկան Շիուքլըր, այսպիսով դարձաւ առաջին գերմանացին, որ վերջին եօթը տարիներուն ընթացքին կը հասնի կրան շրջմի մրցաշարի մը աւարտականին: Վերջին անգամ Միքայէլ Սթիչ հասած էր Ֆրանսայի թենիսի բաց մրցաշարին («Ռոլան Կարոս») աւարտականին: Ան նաեւ դարձած էր վերջին գերմանացին, որ նոյն տարին շահեցաւ Աւստրալիոյ թենիսի բաց մրցաշարը:

Այս իրագործումէն ետք, Շիուքլըր յայտարարեց թէ իրեն համար մեծ երազ մը կ'ընդհանրանայ, նկատի ունենալով, որ աւարտական մրցում մը կատարելը, այդ ալ Անտոն Լիկաիի ղէմ, մեծ նշանակութիւն եւ արժէք կը ներկայացնէ:

Աղջկանց աւարտականի մրցումը, որ այսօր իրարու դէմ պիտի հանէ Ռիլիըմ քոլորը, վստահաբար որ պիտի ըլլայ հետաքրքրական գիտնալու համար, թէ անոնցմէ ո՞ր մէկը իր շահած տիտղոսներուն վրայ պիտի աւելցնէ հատ մըն ալ:

21 տարեկան Սերենա (դասուած՝ թիւ 1) շահած է 19 տիտղոսներ: Իսկ 22 տարեկան Վինըս (դասուած՝ թիւ 2) շահած է 28 տիտղոսներ: Վինըս թէեւ կը գերազանցէ իր քոլոր, սակայն անոնք երկուքն ալ շահած են չորս կրան շրջումներ: Ճիշդ այս պատճառով հետաքրքրական պիտի ըլլայ գիտնալ, թէ անոնցմէ ո՞ր մէկը պիտի շահի իր հինգերորդ կրան շրջմի տիտղոսը:

Նշենք, թէ աղջկանց գոյգի աւարտականին, երկուքն ալ 4-6, 6-4 եւ 6-3 արդիւնքով, երէկ պարտութեան մատնեցին Փաուլա Սուարէս (Արժանթին) - Վերճիսիա Ռուանո Փասըրալ (Սպանիա) գոյգը եւ տիրացան տիտղոսին:

ԱՆԳԼԻՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԲԱԺԱԿԻ ՄՐՅԱՇԱՐԲ

## ԱՅՍՕՐ ԵՒ ՎԱՂԸ Դ. ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ՄՐՅՈՒՄՆԵՐԸ

Անգլիոյ ֆուտպոլի բաժնակիր մրցաշարէն Դ. հանգրուանի մրցումներուն, որոնք տեղի պիտի ունենան այսօր եւ վաղը, տիտղոսակիր Արսենալ իր դաշտին՝ «Հայպըրի» մէջ պիտի հիւրընկալէ ոչ արժեատարաբար խուճերէն՝ Ֆառնպորո խումբը: Սկզբունքով, այս մրցումը տեղի պիտի ունենայ այս վերջինին դաշտին՝ «Չերիլոտ Ռոտ»ի մէջ,

# ՎԵՐԵՍԿԱԿԱՆ ԿԸ ՊԱՐԱՆՁԷ ՔԻՐՈՏ ԵՐԵՍՓՈՒՄԱՆ ԼԵՅԼԱ ԶԱՆԱՅԻ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՈՒՄԸ

Թուրքիա տակալին երկար ճամբայ ունի կորելիք մինչև որ կարենայ մարդկային իրաւանց վերաբերեալ Ե. Միութեան անդամակցութեան համար անհրաժեշտ չափանիշներուն հասնել, յայտնած է ընդարձակ տարածքներու յանձնակատար Կուլթուր Վերհէօկը՝ պահանջելով բանտարկուած քրեւոր երեսփոխան Լէյլա Զանայի ազատ արձակումը:

Վերհէօկըն Եւրոխորհրդարանին յայտնած է, թէ անցնող ամիսներուն Թուրքիոյ կառավարութեան կատարած բարեկարգումները «տպաւորիչ են»:

Սակայն «կան տակալին սահմանափակումներ» Թուրքիոյ մէջ հիմնական իրաւունքներու գործադրութեան մէջ, յայտնած է գերմանացի պաշտօնատարը, խորհրդարանին արտաքին յարաբերութեանց յանձնարարները:

Ան յատկապէս լուսարձակի տակ առած է Զանայի ծանր վիճակը: Նախկին երեսփոխանին դէմ 1994ին 15 տարուան բանտարկութեան վճիռ արձակուած էր՝ Թուրքիոյ քրեւոր փոքրամասնութեան ի խնդիր իր տարած արշաւին պատճառով:

«Կը յուսամ, որ Թուրքիա կամքը, ուժը եւ քաջութիւնը պիտի գտնէ վերաբանայու այս հարցը, որպէսզի ան կարելի եղածին չափ շուտ ազատ արձակուի», ըսած է Վերհէօկըն, միաժամանակ կոչ ուղղելով Թուրքիոյ մէջ քաղաքական բոլոր բանտարկեալներուն ազատ արձակման:

Վերհէօկըն նաեւ «ճեմ մտահոգութիւն» արտայայտած է գերմանական ոչ կառավարական 6 կազմակերպութիւններու բարձրատիճան անդամ 9 գերմանացի եւ 6 Թուրքերու ճակատագիրին մասին: Անոնք Թուրքիոյ կողմէ լրտեսութեան յանցանքով ամբաստանուած են:

«Այդ ամբաստանութիւնները չեն համապատասխանը թեկնածու երկրի մը ակնկալուածին, ինչ կը վերաբերի փողովորդավարութեան եւ օրէնքի իշխանութեան հարցերուն», ըսած է ան:

Գերմանիոյ արտաքին գործոց նախարար Եռչքա Տիլըր երէկ «գրական աւարտի» կոչ ուղղած է ամբաստանեալներուն գատավարութեան:

### ԹՈՒՐԵԱ

## ԵՐԿՈՒ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱՏ ԿԸ ԲԱՆԱՆ ԱՔՓԻ ԴԷՄ

ԱՆԳԱՐԱ, 24 (ԱՖՓ).- Թրքական երկու կուսակցութիւններ Ուրբոք որ արտական ճակատամարտի մը ձեռնարկած են՝ ջնջելու համար Նոյեմբերի երեսփոխանական ընտրութիւնները, որոնցմէ յաղթական դուրս եկած էր Արդարութեան եւ Բարգաւաճման կուսակցութիւնը (ԱՔՓ) Թալիփ Էրտողանի գլխաւորութեամբ:

ԱՔՓ, որ արդիւնք է իսլամական ազդիւնած շարժումի մը, Նոյեմբեր 3ի ընտրութեանց քաջաբախի յաղթանակ մը ապահոված էր, սակայն 48 արտեկան Էրտողան չէր կրցած մասնակցիլ անոնց, որովհետեւ 1998ին կուսական ատելութիւն հրահրելու յանցանքով դատաւարուած է:

Ընտրութիւններէն ի վեր ան դատական եւ սահմանադրական ճակատներուն վրայ ճակատամարտ կը մղէ՝ ձեռք ձգելու համար ընտրուելու եւ վարչապետի պաշտօնը ստանձնելու իրաւունքը:

Երկրին քաղաքական աշխարհիկ եւ պահպանողական շրջանակները ունին այն մտաւայելութիւնը, թէ ան չէ հրաժարած իսլամական իր արմատներէն, հակառակ յայտարարութիւններուն, թէ յանձնառու է Թուրքիոյ արեւմտամետ գաղափարներուն:

Երիտասարդ Կուսակցութիւնը՝ հիմնուած գործարար ձեմ Ուլախի կողմէ, գանգատած է ընտրական յանձնարումներին, թէ Էրտողանի անունը ընտրութեան ընթացքին երեւցած է քուէարկութեան թերթիկներու վրայ:

Ան ընտրութեանց թեկնածու չէ եղած, սակայն անոր անունը քուէարկութեան թղթիկներուն վրայ երեւցած է իբրէն կուսակցութեան ղեկավար:

Նշելով այս շարք սահմանադրական առեւանդին մէկ վճիռ՝ կուսակցութիւնը ըսած է, թէ քուէարկողները խաբուած են՝ նկատի ունենալով, որ ընտրութեան օրերուն Էրտողան կուսակցութեան ղեկավարը չէր: Սահմանադրական ատելութիւն, որ պարտադրած էր Էրտողանին ԱՔՓի իշխող մարմինին անդամի իր

Պոյսոյ մէջ իր պաշտօնակիցին՝ Եաշար Եաքըլի հետ տեսակցութեան մը ետք, ան յայտնած է, որ դատավարութեան ենթարկուող գերմանացիները Թուրքիոյ «իսկական բարեկամներ» են:

Գերմանական պատուիրակութեան աղբիւրներ յայտնած են, թէ Եաքըլի հետ իր տեսակցութեան ընթացքին աւելի եւս անդին դացած է՝ ամբաստանութիւնները «անիմաստ եւ անհիմն» նկատելով:

Եաքըլ ըսած է, թէ կը հասկնայ Տիլըրի արտայայտութիւնները, սակայն շեշտած է, թէ Թուրքիոյ դատական իշխանութիւնները անկախ են:

Ամբաստանեալները կը հերքեն իրենց դէմ ուղղուած ամբաստանութիւնները:

Անոնք ամբաստանուած են տեղացի գործակիցներով «գաղտնի դաշինք» մը հաստատած ըլլալու յանցանքով: Անոնք կրնան 15 տարուան բանտարկութեան ենթարկուիլ, եթէ յանցաւոր նկատուին:

### ՆՈՐ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄՆԵՐՈՒ ՈՐԴԵՐՈՒՄ

Միւս կողմէ, Թուրքիոյ խորհրդարանը Հինգշաբթի օր որդեգրած է շարք մը բարեկարգումներ՝ Ե. Միութեան անդամակցութեան չափանիշներուն հասանելու նպատակով՝ ճամբան հարթելով քրեւոր նախկին 4 երեսփոխաններու կրկին դատավարութեան: Անոնք անդամակցութեան յանցանքով ամբաստանուած են:

Բարեկարգումները կ'ընդարձակեն նոր դատավարութիւններու համար զիմուծներու ծիրը, երկիրը հասցնելու նպատակով եւրոպական չափանիշներուն, ըսած է արդարութեան նախարար ձեմիլ Չիլչէք խորհրդարանին:

Մարդկային իրաւանց եւրոպական ատենը վճռած է, թէ քրեւոր երեսփոխանները, որոնց կարգին Լէյլա Զանա, Թուրքիոյ մէջ անարգար դատավարութիւն մը ունեցած են: Անիկա բազմիցս անոնց ազատ արձակումը պահանջած է:

## ՊԱՂՏԱՏ ԵՒ ԻՐԱՔՅԻՆԵՐԸ ՊԱՏՐԱՍՏ ԵՆ...

Շարունակուած Ա. Էջէն

նաեւ գիտնականներուն ընտանիքները: Ամերիկացի պաշտօնատարը ըստ նաեւ, որ Իրաք հասնաւ արտաքին գործակալութեան համակարգիչները՝ խանգարում կեն գործելու համար: Ըստ վոյժովիցի, Իրաք հեռու վայրերու մէջ կը պահէ փաստաթուղթեր եւ այլ փաստեր: Վոյժովիցի իր ամբաստանութիւնները հաստատող որեւէ փաստ չ'ներկայացուց:

Մինչ այդ, ՄԱԿի քննիչները կը շարունակեն քննութիւնները: Անոնք երէկ այցելեցին Ռաժի Կիւնտրական համալիրը, որ կը գտնուի մայրաքաղաք Պաղատայի մէջ: Քննիչները նախապէս այցելած են յիշեալ կէտերը՝ հաւաքական քանդուիլի վէճերու գոյութիւնը հաստատող կամ հերքող փաստեր գտնելու համար:

որ Մոսկուա գոհ է ՄԱԿի քննիչներուն Իրաքի մէջ արձանագրած յառաջդիւնութենէն: Ճետքով պոլիտեքոնոմի Իրաքի դէմ ուժի գործածութենէն:

### ԻՐԱԿԻ ԴՊԱՅԻՆԵՐԸ ԳՈՐԵԿԱՑՈՒԹԵԱՆ ԿՈՉ ԿՈՒՂՆԵՆ

Իսլամական վեց երկիրներ, որոնցմէ հինգը Իրաքի սահմանակից են, կոչ ուղղեցին Պաղատայի թափ տալու ՄԱԿի քննիչներուն հետ գործակցութեան: Իրանի, Թուրքիոյ, Յորդանանի, Մուսուլի, Եգիպտոսի եւ Մեքսիկոյ կան Արաբի արտաքին գործոց նախարարները, որոնք միօրեայ հանդիպում մը ունեցած էին Պոլտոյ մէջ, Իրաքի ղեկավարութեան պահանջեցին տեղը դառնալու իր պատասխանատուութիւններուն՝ կայունութիւն եւ խաղաղութիւն վերահաստատելով շրջանին մէջ: Պոլտոյ հանդիպումը կոչ ուղղեց Պաղատայի աւելի արական մտտեցում մը որդեգրելու քննութիւններուն հանդէպ՝ առաւելագոյն չափի ու ձեւի գործակցութիւն գուցաբերելով:

Թրքական մամուլը որդեգրեց Պոլտոյ ժողովի ու անոր աւարտին հրապարակուած յայտարարութիւնը: Թրքական օրա-

թերթերուն համաձայն՝ Պոլտոյ հանդիպումը «Թուրքիոյ համար յաջողութիւն է»:

Թուրքիոյ իշխող կուսակցութեան ղեկավար Ռեճէփ Էրտողան իր կարգին դիտել տուաւ, որ ՄԱԿի վերապահումը է Իրաքի հանդէպ որդեգրուելիք միջոցառումներուն ճշգրտումը՝ յսնել ետք գլխաւոր քննիչներուն տեղեկագիրը ու արժեւորումը: Էրտողան անուղղակի կերպով քննադատեց Ուաշինկթընը, դիտել տալով, որ կը սպառնայ յարձակիլ Իրաքի վրայ, եթէ այս վերջինս չ'փճացնէ հաւաքական քանդուիլի բոլոր վէճերը, մինչ ի'նք (Ուաշինկթըն) կը պահէ քիմիական, կորիւկային եւ այլ վէճերը եւ մէկը չ'ի պահանջեր, որ պանոնք փճացնէ: Աւելի ուշ, Էրտողան ըսաւ, որ խօսքը ուղղած էր այդ տիպի վէճերը ունեցող բոլոր երկիրներուն:

Պոլտոյ ժողովին մասնակցող Յորդանանի արտաքին գործոց նախարար Մարուան Մուաշէր ըսաւ, որ վեց երկիրներուն կողմէ հրապարակուած յայտարարութիւնը կ'ընդգոծէ, թէ Իրաքի տագնապ պետք է լուծուի ՄԱԿի մէջ եւ ՄԱԿի դիւանագիտական ճիգերով:

(ԱՖՓ)

## ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ...

Շարունակուած Ա. Էջէն

նէն, Ռուսիայէն եւ իրենց կշիռը ունեցող եւրոպական երկիրներէն:

Նախագահ Լազուտի այցելեց Լիբանանի մէջ Եգիպտոսի դեսպան Ջիւսէյն Տարրար, որ նախագահին հետ քննարկեց Պէյրութ - Գահիթէ երկկողմանի յարաբերութիւնները, արաբական եւ շրջանային իրադարձութիւնները, ինչպէս նաեւ իրաքեան հարցին խաղաղ լուծում ապահովելու գանազան երկիրներու կեցուածքները:

Նախագահ Լազուտ ընդունեց փաստաբաններու Պէյրութի սենսիթիւ նախագահ Ռեմոն Շարիտը, որ շնորհակալութիւն յայտնեց արդարութեան պայտաններուն մուտքերուն փաստաբաններուն դէմ կիրարկուող խուզարկումներուն վերջ մը դնելու որոշումին համար, որ սուրուեցաւ ներքին գործոց եւ արդարութեան նախարարներու շնորհակալութեամբ:

Նախագահական պալատի հիւրերէն էին նաեւ նախկին նախարար եւ երեսփոխան Ջահէր Ռաթիպ եւ նախկին երեսփոխան Նիքոլա Ղարսն:

## Հովանաւորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌԻ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ

## ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ Կը ներկայացնէ՝



### «ԿՈՍԻՏԱՍ» ԲԱՆԵԱԿԸ

Շարք, 1 Փետրուար 2003, երեկոյեան ժամը 8:30ին, Ամերիկեան համալսարանի «Էսեմպլի Հոլ»-ին մէջ:

Տոմարը սպանալ Գրապուն Նարեկացիէն, Համազասկի հի գրախանութէն, «Լ. Շանթ» կեդրոնէն եւ կամ հեռուստայնէլ 01/258300 քիփն:

Logos for Banque Audi, GARDEN TOWER, BYCOP, and GULBENG CORP.

## ՀԻՆԳ ՎԱՅՐԿԵԱՆ ՏԵՒՈՂՈՒԹԻՒՆ...

Շարունակուած՝ 4րդ էջէն

Թէի (մահացած) նման ընծադրիչներ: Բոլորն այ ունեցած են իրենց իւրաւատու ոճը: Եօթանասունը բոլորած Կոտար շարունակ քննարկուած է պատկերասփիւնը կոչեցեալ հիւանդութիւնը, մինչդեռ Աթոմ, Թրիւֆոնի նման, եղած է թատրոնի (ի վերջոյ ան ուսած է թատրոնի ղեկավար), աւելի՛ն՝ պատկերասփիւնի եւ վիսեօ-երիզի սիրահար: Անոր հիացմունքն ու սէրը այս տեսողական միջոցներուն հանդէպ նկատելի է իր բոլոր գործերուն մէջ: Իսկ «Արարատ»-ին մէջ կը մնայ ժայռաւէնի բարնային: «Արարատ»-ին մէջ արդէն «Արարատ» մը կը խաղցուի եւ սոյն ժայռաւէնի մէջէն կը ցուցարարուին տեսարաններ պատկերասփիւնէն, որ իր կարգին կ'ընդգրկէ վիսեօ-երիզի տեսարաններ: Բազմիցս կը կրկնուի այս «խառնիճադան» երեւոյթը:

եռանդ կատարած է նաեւ Թրիւֆոն «La Nuit Americaine» (ժայռաւէնի մէջ ժայռաւէն) եւ «Le dernier Metro» (ժայռաւէնի մէջ թատրոնի գութիւն) ժայռաւէններուն մէջ: Մթնոլորտը նոյնն է: Աւելի՛ն. կարելի է Թրիւֆոնի ի յիշատակ նկատել Էտուար Սարոյեան (Ազնաւուրի դերը) տիպարի մը գոյուցութիւնը... Յրանսահայ հուշակաւոր երգիչը այդ անունը կրած էր վաթսուներկաններուն սկիզբը, Թրիւֆոնի բեմադրած «Tirez sur le pianiste» ժայռաւէնի մէջ: Ահաւաւաւի նաեւ «Hommage a Aznavour» մըն այ:

Հանդիսատեսը ակընթաթ մըն այ կրնայ ինչ ֆրանսահայ բեմադրիչ Հանրի Վերնէօյի (Աշոտ Մալաբեան) «The Serpent» ժայռաւէնը, երբ կը ինչուի, թէ վանէն կարելի է տեսնել Արարատ լեռը... Հոս կայ: Կարելի է թաղապետը Վերնէօյի success storyն Աթոմի

ոճին հետ: Վերնէօյ իր դիւրամարս եւ հետաքրքրաշարժ պատմութիւններով եղած էր Թրիւֆոնի, Կոտարի եւ այդ Նոր Ալիքի ռիսկի միջնամիտ... Այնքան մը, որ ան Երիտասարդ Թուրքերու (jeunes turcs) շարքին սեպած էր այս նոր դպրոցը: Եթէ Աթոմ պիտի չ'մնար անոր ցեխարձակումներէն: Հետեւաբար անտեղի պիտի ըլլայ բազմաթիւ տարբեր ոսպնեակի պատկանող «Արարատ»-ն ու Վերնէօյի «Մարիկ» ժայռաւէնները: Մնալով վերացական՝ շարժապատկերի հանդէպ ունեցած իր խոր հետաքրքրութեան եւ յարգանքին, յիշատակելի է ժայռաւէնի սկիզբը հայկականութիւն խորհրդանշող պտուղի՛ն՝ նուրի ներկայութիւնն ու անոր ունեցած դերը, հայորդիի կեանքին մէջ: Ահաւասիկ այս անգամ Փարսճանովի «Նուան Գոյն»-ն է, որ խորացոյցի տակ առնուած է:

Դեռ շատ բան կարելի է գրել այս ժայռաւէնին, դերասաններուն, երաժշտութեան (Իգապէլ Պայրազ տարեանի երգերէն մինչեւ «Ախսըմ» աֆ Տաուլ) եւ Աթոմ տիպարին մասին, որ տարիներ շարունակ ապրած է Քանաթայի հեռուոր բրիտանական Քոլումպիայի մէջ: Չայն լսելը, տեսնելը եւ անոր գործերը ըմբռնելը իւրաքանչիւր փորձառութիւն մըն է. արուեստի հանդէպ անոր սէրը եւ խանդավառութիւնը յստակ են. անմիջական եւ հաղորդական՝ ան դիւրաւ կը պարզաբանէ մտածումներն ու զգացումները եւ հանդիսատեսը կը փոխադրէ իր աշխարհը:

Յստակ է, որ ան տագնապ է իր ներքին հասցնութիւններուն հետ հաշտուելու եւ իր վարքը գտնելու համար: Ահաւասիկ ինքնավստահ եւ ճակատաբաց երթ մը դէպի «Արարատ»:

Պոսքն